

ԿԱՐԵՆ ԽԱՆՅԱՆ



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ
ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՆ

ԿԱՐԵՆ ՍՈԿՐԱՏԻ ԽԱՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՆ

Երևան - 2019

ՀՅԴ 82.0
ԳՄԴ 83.3
Խ 256

Տպագրված է
Խ.Աբովյանի անվան ՀՄՊՀ
բանասիրական ֆակուլտետի
խորհրդի երաշխավորությամբ

Խմբագիր՝
Սոկրատ ԽԱՆՅԱՆ, ք. գ. դ., պրոֆեսոր, ԼՂՀ գիտության
վաստակավոր գործիչ

Գրախոս՝
Աելիտա Դոլուխանյան, ք. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
թղթակից անդամ

Խանյան Կ. Ս.

Խ 256 Հովհաննես Թումանյանը և ռուսական պոեզիան/
Կ.Ս. Խանյան. - Երևան: Հեղինակային հրատ., 2019, - 74 էջ:

Աշխատությունը նվիրված է Հովհ. Թումանյանի ծննդյան
150-ամյակին: Նրանում 21-րդ դարի սերնդի աշխարհայեցողու-
թյամբ փորձ է արվում նորովի գնահատել անմահ բանաստեղծի
իրատեսական մոտեցումները ռուսական պոեզիայի և նրա թողած
բարերար ազդեցությանը հայ նոր պոեզիայի վրա, ինչպես նաև
ներկայացնել ռուս անվանի գրողների փոխադարձ սերն ու
հարգանքը Մեծ Լոռեցու նկատմամբ:

ՀՅԴ 82.0
ԳՄԴ 83.3

ISBN 978-9939-0-3174-3

©Խանյան Կարեն Սոկրատի, 2019

ՆԱԽԱԲԱՆ

Անվանի բոլոր թումանյանագետները Մեծ Լոռեցու մասին ունեցած իրենց ելույթներում ու զեկուցումներում ընդգծել են հետևյալ կարծիքը՝ եթե Հովհաննես Թումանյանը պոետական իր ձևավորման սկզբից մինչև արևային հանճարի գագաթնակետ միայն սնվեր մայրենի պոեզիայի ավանդույթներով, այնպիսի մեծությունների թողած ժառանգություններով, որպիսիք Գրիգոր Նարեկացին ու Ներսես Շնորհալին են, Նահապետ Քուչակն ու Սայաթ-Նովան, Խաչատուր Աբովյանն ու Պետրոս Դուրյանը, միևնույն է, նա չէր հասնի համաշխարհային պոեզիայի եզակի անհատականություններին:

Հ.Թումանյանի վերաբերմունքը համաշխարհային պոեզիային հայտնի է իր դրական կարծիքներով: Սակայն ճշմարտությունը պահանջում է նշել, որ առաջին հերթին Մեծ Լոռեցու համար պոետական դաս ու դպրոց է հանդիսացել ռուսական դասական հարուստ ու բարձրարվեստ գրականությունը: Պատահական չէ նաև թումանյանագիտության ուշադրությունը տվյալ հիմնախնդրի վերաբերյալ: Հայտնի են Ասատուր Ասատրյանի «Հովհաննես Թումանյանը և ռուս կլասիկ գրականությունը», Նվարդ Թումանյանի «Հովհաննես Թումանյանը և ռուս գրականությունը», Մնացական Նահապետյանի «Թումանյանը ժողովուրդների բարեկամության և խաղաղության երգիչ», Գուրգեն Հովնանի

Տպագրված է....
Ք.Երևան....

Ստորագրված է
Չափսը.....
Տպաքանակը 200

«Մաքսիմ Գորկին և հայ կուլտուրան», Էդվարդ Ջրբաշյանի «Պուշկինը և հայ բանաստեղծները», «Թումանյանի գրական ժառանգությունը», Անուշավան Զաքարյանի «Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում (1916-1921թթ)» և այլ աշխատություններ: Սակայն փոխվում են ժամանակները, հանդես են գալիս նոր սերունդներ, որոնք անցյալի գրական ժառանգությունն ընկալում ու գնահատում են իրենց նոր աշխարհայեցողությամբ ու մոտեցումով: Առանձնապես այնպիսի գրող, որպիսին Հովհաննես Թումանյանն է, որ դարերին է հանձնել այնքա՞ն բազմաշերտ ու բազմերանգ գրական ժառանգություն, հնարավորություն է ընձեռում նորովի ընթերցել ու բացահայտել բոլոր ժամանակների համար նրա մարգարեական ընդհանրացումներն ու խորհուրդները: Գրապատմական այս ճշմարիտ դասն էլ հենց մեզ մղել է ստեղծելու սույն աշխատությունը:

Հովհաննես Թումանյանը աստվածաշնորհ տաղանդի ընկալումով յուրացրել է համաաշխարհային հանճարների կուտակումները, համամարդկային գեղարվեստական խոսքի հարստությունը: Հենց այդ կենսափիլիսոփայությունն ըմբռնելու շնորհիվ է դարձել մեծ՝ իր ոսկեկուռ գահը գրավելով եզակի դեմքերի շարքում: Եվ պատահական չէ մեր ազգային գերաստղերից մեկի՝ Եղիշե Զարենցի դիպուկ գնահատականը.

КАРЕН СОКРАТОВИЧ ХАНЫН
ԿԱՐԵՆ ՍՈԿՐԱՏԻ ԽԱՆՅԱՆ

ОВАННЕС ТУМАНЯН И РУССКАЯ ПОЭЗИЯ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ
ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՆ

Ереван -2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան..... 3

Ռուսական պոեզիայի առինքնող ուժը..... 6

Սրբազան անուններ.....13

Դրամբյանիզմի չարիքը.....20

Հայ պոեզիան բրյուսովյան ծիրերում.....23

Գրական գերաստղերի լույսը.....38

Մուրումցի Իլյան՝ ձեզ օրինակ41

Մինչև այժմ հավատում էինք, սխալվե՞լ ենք.46

Համեցեք ներս49

Վերջաբան62

Օգտագործված գրականության ցանկ.....69

Ես կարդում եմ նրան ու ասում,
 - Այս հմուտ, հանճարեղ Լոռեցին
 Հովերի, Գյոթեի հետ մի օր հավասար նստել է քեֆի
 Եվ թաս է բռնել նրանց հետ, մեծարանք տվել ու առել,
 Ինչպես իր պապերն են առել՝ իրար հետ քեֆի նստելիս¹:

Իսկ մեր ազգային մյուս հանճարը՝ Ավ. Իսահակյանը, ընդգծել է. «Հովհաննես Թումանյանը անմահ է, նա ապրում է մեզ հետ: Հայ ժողովուրդը կարդում է նրա չքնաղ պոեմները, նրա երկերը, լսում է նրա խոսքն ու խոհը, համակվում է նրա ջերմ սիրով դեպի հայրենիքը և հայ լեզուն, դեպի մարդն ու աշխարհը:

Այո՛, Հովհաննես Թումանյանը մեր ժողովրդի գանձն է ու պարծանքը, մեր գրականության զարդն ու փառքը»²:

Դժվար չէ նկատել հայոց մեծերի հիացմունքը Հովհ. Թումանյանի աշխարհայացքի խորաթափանցության ու համամարդկային արժեքների յուրացման կապակցությամբ: Սակայն ամեն դեպքում հետաքրքիր է իմանալ, որ Մեծ Լոռեցու ստեղծագործական ներաշխարհի հարստացման, պոետական արվեստի կատարելագործման ուղղությամբ իր համար նաև ժողովրդի բանավոր ստեղծագործությունն է դարձել դպրոց՝ ստեղծագործական առաջին շրջանից մինչև կյանքի վերջը:

¹ Չարենց Ե., Հատընտիր, Եր., 1987, էջ 443:
² Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Եր., 1977, էջ 283:

ՌՌԻՍԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ԱՌԻՆՔՆՈՂ ՈՒԺԸ

Մեծ Լոռեցու ստեղծագործական աշխարհի զարգացման ու հարստացման ճանապարհին ռուս գրականության դերի հարցը շատ է հետաքրքրել թումանյանագետներին: Այդ հարցի պատասխանը առաջին հերթին հենց տվել է ինքը՝ մեծանուն բանաստեղծը: Հայտնի է 1902թ. ռուս անվանի հայագետ, գրականագետ Յուրի Վեսելովսկու նամակը՝ ուղղված հայ գրողներին: Նրանում առաջադրված են հետևյալ հարցերը³.

1. Դուք ինչ-որ բանով Ձեզ պարտակա՞ն եք համարում ռուսական գրականության ազդեցությանը՝ ի դեմս առանձին ներկայացուցիչների:

2. Եթե այո, ապա ո՞ր գրողների երկերն եք առավել համակրել, այդ գրողների ո՞ր երկերն են Ձեզ վրա թողել մեծ տպավորություն:

3. Այդ ազդեցությունը չի՞ նկատվել Ձեր ստեղծագործություններից որևէ մեկի վրա:

Յուրի Վեսելովսկուն պատասխանել են ժամանակի բոլոր հայ գրողները, այդ թվում և Հովհաննես Թումանյանը:

Հ.Թումանյանը 1902-ի հոկտեմբերին Աբասթուրմանից հղած պատասխանում նշում է, որ մինչև այդ նամակն ստանալն ինքը չի մտածել այն մասին, թե

24. Давтян А., Юрий Веселовский и армянская литература. Изд. “Айастан”, Ер., 1970.

25. Закарян А., Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье (1916-1921 гг). Изд. “Титутюн” НАН РА, Ер., 2005.

³ Տե՛ս Веселовский Ю., Русское влияние в современной армянской литературе. М., 1909, стр. 9.

12. Հովնան Գ., Մաքսիմ Գորկին և հայ կուլտուրան, «Հայաստան», Եր., 1940 /1968/:

13. Նահապետյան Մ., Հովհաննես Թումանյանը ժողովուրդների բարեկամության և խաղաղության երգիչ, Եր., 1954:

14. Չարենց Ե., Հատընտիր, «Սովետական գրող», Եր., 1987:

15. Ջրբաշյան Էդ., Թումանյանի գրական ժառանգությունը, «Գիտություն», Եր., 2000:

16. Ջրբաշյան Էդ., Պուշկինը և հայ բանաստեղծները, «Գիտություն», Եր., 1999:

17. Վալերի Բրյուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, ՀՍՍՀ, ԳԱ հրատ., Եր., 1967:

18. Տերյան Վ., Երկերի ժողովածու 4 հատորով, Եր., 1975:

19. Антология армянской поэзии. Изд. “Художественная литература”, Москва, 1940.

20. Брюсов В.Я., Об Армении и армянской культуре. Стихи. Статьи. Письма. Изд. АН АССР, Ереван, 1963.

21. Веселовский Ю.А., Русское влияние в современной армянской литературе. М., 1909.

22. Городецкий С.М., Об Армении и армянской культуре. Изд. “Айастан”. Եր., 1974.

23. Городецкий С.М., Последний крик. Стихи и проза. Изд. “Эдит Принт”. Եր., 2010.

որքան է եղել ռուսաց գրականության ազդեցության տակ: Նամակն ստանալուց հետո երկար մտածեց ռուս գրականության ազդեցության մասին, բայց ոչ թե իր բանաստեղծությունների տողերում, որովհետև երբեք գիտությամբ չի հետևել ու նմանվել որևէ բանաստեղծի, այլ ելել է իր հոգուց, գրական ճաշակից ու հայացքներից:

Մեծ Լոռեցին այստեղ վերհիշում է թե՛ դպրոցական տարիների և թե՛ դպրոցից դուրս կարդացած ռուս բանաստեղծների գործերն ու մատնանշում Պուշկինի «Буря мглою небо кроет», «Полтава», «Цыгане», կամ Լերմոնտովի «Демон», «Ангел», «Ветка Палестины», «Песня о царе Иване Васильевиче», «Три пальмы», «Мцыри», «Тучки небесныя, вечныя странники», «Спор», «Выхожу один я на дорогу», «Пророк», «И скучно и грустно» գործերը: «...ինձ այնքան սիրելի են եղած միշտ, և մանավանդ դրանցից մի քանիսն էլ թարգմանած են, ինչպես Լերմոնտովի «Мцыри», «Ангел», «Желание», «Я не хочу, чтоб свет узнал» կամ Պուշկինի «Утопленник», «Песнь о вещем Олеге», «Заклинание», «Романс», որ անշուշտ ազդած պիտի լինեն ինձ վրա»⁴:

Հ.Թումանյանը միաժամանակ խոստովանում է, որ ռուսաց բանաստեղծներից գլխավորապես Լերմոնտովը և Պուշկինը միշտ իրեն ավելի հարազատ են թվացել,

⁴ Հ.Թումանյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Եր., 1955, էջ 232-233:

քան թե իր նախորդ շրջանի հայ բանաստեղծները: Եվ նա բացատրում է պատճառը՝ ընդգծելով, որ ճակատագրի քմահաճույքով մեր բանաստեղծներն ապրել ու երգել են խորթ ու հեռու Հայոց աշխարհից, երգել են ուրիշից փոխ առված սովորություններ, երգել են օտար աշխարհում, նրանց երգերի մեջ չկան ո՛չ հայկական բնությունը, ո՛չ էլ մայր ժողովուրդը:

Մեծ Լոռեցին որպես օրինակ բերում է Սմբատ Շահազիզին և Գամառ Քաթիպային:

Նա կոնկրետ հաստատումներ է բերում վերոնշյալ բանաստեղծների առանձին գործերից, որոնցում բացակայում են հայկական միջավայրն ու բնությունը: Ապա օրինակներ է բերում Պուշկինի «Кавказский пленник», Լերմոնտովի «Измаил-бей», «Демон» և այլ երկերից, որոնցում պատկերված են Կովկասի սարերը, կյանքը, ժողովրդի սովորություններն ու լեզենդները:

Մատնանշելով Պուշկինի ու Լերմոնտովի՝ Կովկասին նվիրած երկերը՝ Մեծ Լոռեցին նշում է. «Ես էլ, իբրև կովկասցի ու լեռնցի, սիրել եմ այդ երգերն ու պոեմները: Եվ, թեպետ լեռների սերն ու լեռնական կյանքի կարոտը ես ունեցել եմ իմ հոգում, բայց անշուշտ, նրանք դրդել են ինձ ու տվել պոեմայի այն ձևը, որով գրել եմ, որովհետև մեր գրականության մեջ այդ տեսակ պոեմ չի եղել...»⁵: Ու ոչ միայն այդ: 1914թ. «Հորիզոն»

⁵ Նույն տեղում, էջ 235-236:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Ա., Հովհաննես Թումանյանը և ռուս կլասիկ գրականությունը, Տեղեկագիր Հայկ ՍՍՌ ԳԱ Հաս. գիտ. սերիա, Եր., 1949, № 2, էջ 17-31:

2. Գորոդեցկի Ս., Հովհաննես Թումանյան, «Սովետական արվեստ», Եր. 1958, № 8, էջ 62-67:

3. Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու 6 հատորով, «Սովետական գրող», Եր., 1977:

4. Թումանյան Հ., Երկերի ժողովածու 4 հատորով, «Հայաստան», Երևան, 1969:

5. Թումանյան Հ., Երկերի ժողովածու 5 հատորով, «Հայաստան», Եր., 1940-1951:

6. Թումանյան Հ., Երկերի ժողովածու 6 հատորով, «Հայպետհրատ», Եր., 1951-1959:

7. Թումանյան Ն., Հովհաննես Թումանյանը և ռուս գրականությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1956:


8. Թումանյան Ն., Հուշեր և գրույցներ, «Լույս», Եր., 1969:

9. Թումանյանը ժամանակակիցների հուշերում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1969:

10. Հովհաննես Թումանյան (1869-1959), ՀՍՍՌ Մյասնիկյանի անվան պետական ռեսպուբլիկական գրադարան, Եր., 1959:

11. Հովհաննես Թումանյանը արվեստի մասին, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1969:

ПО ПОВОДУ ЛЕКЦИИ В. БРЮСОВА



и нежные чувства человеческого сердца и сумел подняться до Нарекации, который устремил свой кающийся взор к небу и вел беседу с богом, один на один.

И даже сегодня, когда родина армян истерзана и истекает кровью от края до края, армянин лишь глубоко мучается и страдает, но не отчаивается, не впадает в уныние, и творческий дух его не ослабевает ни на мгновение.

Какое же более высокое свидетельство благородства может явить народ всему миру?

И сегодня этот народ, в котором так силен дух творчества, созидания, с чувством гордости собственного достоинства может сказать:

- Наш дорогой гость и верный друг, мы всегда имели это высокое свидетельство. Но оно из тех свидетельств, на которых лежит печать не человеческой власти, а самого бога и природы. И потому насколько трудно иметь его, настолько трудно и прочесть. Это те письма, о которых наш Свят-Нова говорил:

Не всем мои писанья чтить - особый смысл у слов моих!

Вы явились одним из тех немногих людей, которые смогли прочесть эти волшебные письмена и обнародовать их миру. О нашей поэзии, о нашей культуре просвещенный мир, и в особенности Россия, знают мало. Вы явились первым из русских поэтов, который вместе со своими известными коллегами широко знакомит читателя с поэзией, творческой силой армянского и других братских народов и связывает эти народы узами взаимного уважения и любви.

И за это высокое и прекрасное начинание я сердечно благодарю Вас от имени Общества армянских писателей. Мы приветствуем Вас как видного представителя русской литературы и с любовью и благоговением склоняемся перед прекрасной литературой великого русского народа - перед литературой Пушкина, Лермонтова, Гоголя, Достоевского, Тургенева, Чехова, Толстого, литературой, под влиянием которой воспитывались очень и очень многие наши писатели и интеллигенты. Сами мы давно уже связаны с русской литературой и теперь очень рады, что связь эта становится взаимной. И утверждает ее Вы. Дай бог, чтобы Вы были не единственным высоким представителем русской интеллигенции, идущим к нам от имени русской литературы со словами любви и уважения.

1916 г.

В дни, когда мы, изнемогая от бремени национального бедствия, чувствуем себя физически слабыми и беспомощными, в эти дни приезжает к нам с далекого севера знаменитый русский поэт Валерий Брюсов и говорит о нашем величии, о моральной, духовной силе армянского народа - о его поэзии.

Он называет армянскую поэзию свидетельством благородства армянского народа.

И действительно, поэтический гений армянского народа сумел выразить самые сокровенные

թերթի հոկտեմբերի 2-ի 217 համարում տպագրվում է Հ.Թումանյանի «Կովկասի մեծ որդեգիրը» հոդվածը, որտեղ նա ընդգծում է. «Հազար-հազարավոր մեծ մարդիկ են եկել անցել Կովկասից, բայց նրանք բոլորը Կովկասի համար եղել են անցվորներ, ախոյաններ, բարեկամներ կամ հյուրեր, իսկ որդեգիր նա շատ քիչ է ունեցել:

Էդ երջանիկ քչերից եղան երկու ռուս մեծ բանաստեղծները - Պուշկինն ու Լերմոնտովը: Արդյո՞ք հարավի ու լեռնաստանի ժառանգական արյունն էր, որ խոսեց նրանց մեջ, թե՞ ջինջ ու հստակ մեծություններին ձգտող բանաստեղծի ոգին, ո՞վ գիտի, թերևս ն՛ մինը, ն՛ մյուսը, բայց նրանք Կովկասը սիրեցին, Կովկասը՝ նրանց, ու մեծ Կովկասին որդեգիրներ եղան հավիտյանս հավիտենից»⁶:

Հ.Թումանյանն այստեղ միաժամանակ արվեստագետի արդար ցասումով նշում է ռուս գրականության այդ երկու հսկաների հանդեպ եղած հալածանքներն ու դաժան սպանությունները: Նա խիստ խարազանում է տգետ ու դաժան այն ուժերին, ովքեր չհանդուրժեցին ազատաբաղձ այդ հանճարների խիզախությունը ցարական չինովնիկների հակաժողովրդական դաժան քաղաքականության ու անմարդկային վերաբերմունքի դեմ:

⁶ Թումանյան Հ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, Եր., 1969, էջ 220:

1914թ. հոկտեմբերին պետք է նշվեր Մ.Լերմոնտովի ծննդյան 100-ամյակը: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմի պատճառով հետաձգվել էր այդ տոնակատարությունը: Մեծ Լոռեցին անհամբեր սպասում էր այդ հոբելյանական արարողությանը: Նա գրել է. «Երբ կգա Լերմոնտովի հարյուրամյակի կատարման օրը, մենք՝ կովկասցիներս, կտոնենք ոչ միայն որպես մի մեծ ռուս բանաստեղծի տոն, որին, ինչպես և առհասարակ ռուս գրականությանը, շատ բան ենք պարտական, այլև որպես մի բանաստեղծի, որ հոգով հարազատ է մեզ, որ մեր ընդհանուր մոր - Կովկասի աննման որդեգիրն է, որ դեռ մանուկ օրից երկինքն ու Կովկասի կապույտ աստղերը միասին է երազել»⁷:

Հ.Թումանյանը տարբեր առիթներով նշել է, որ հայ նոր գրականությունը ձևավորվել ու զարգացել է ռուսական դասական գրականության բարերար ազդեցությամբ: Նա միաժամանակ ընդգծել է ճշմարիտ գրողի ձգտումը՝ ազդեցության ոլորտից դուրս գալու և ինքնատիպ ճանապարհ մտնելու անհրաժեշտությունը: Կարևորն այն է, որ նա, տիրապետելով ռուսաց լեզվին, ամբողջ կյանքում ըմբռնվել է ռուսական հզոր գրականության լավագույն նմուշները, ձեռնամուխ եղել դրանց վարպետ թարգմանությանը:

⁷ Նույն տեղում, էջ 223:



Туманин с русским поэтом С. Городецким (1916 г.)





1889թ. հայ ընթերցողը ծանոթանում է Լերմոնտովի «Իդա» բանաստեղծությանը՝ Թումանյանի թարգմանությամբ, իսկ 1890-ին՝ Պուշկինի «Եթե իրավ է, որ գիշերները» երկին: Երկու տարի անց հայ ընթերցողի սեփականությունը դարձան Պուշկինի «Ռոմանս», Լերմոնտովի «Ես չեմ ուզում մարդ իմանա» գործերը:

Հ.Թումանյանի առաջին թարգմանությունը ռուս գրականությունից Ժուկովսկու «Աքիլլես» պոեմն է: Դա 1892 թվականին էր, երբ Մոսկվայում լույս էր տեսել Թումանյանի բանաստեղծությունների 2-րդ գիրքը և արժանացել հայ ուսանողների բարձր գնահատականին:

1894-ին Մեծ Լոռեցին թարգմանում է Լերմոնտովի «Հրեշտակ», Նադսոնի «Մեռավ իմ մուսան» ու Նեկրասովի «Մայրը» քերթվածները: Հայ մամուլը տպագրում է դրանք՝ բարձր գնահատելով թարգմանչի կողմից բնագրին հարազատ մնալու և պահանջվող արվեստով ներկայացնելու կարողությունը: Ահա Նեկրասովի «Մայրը» հյուսվածքը՝ Մեծ Լոռեցու թարգմանությամբ.

Լսելով կռվի արհավիրքների,
 Ամեն մի ընկած նոր զոհի մասին,
 Ես չեմ ափսոսում կնոջն, ընկերին,
 Եվ ոչ էլ նույն իսկ իրան՝ հերոսին...
 Կրմխիթարվի, ո՛հ, կինը մի օր,
 Ընկերն ընկերին կանի մտահան,
 Բայց մի հոգի կա, մի տեղ սգավոր -
 Նա հիշելու է մինչև գերեզման...
 Այս մեր կեղծավոր, ստոր աշխարքում,



Այսքան գարշելի գործերի շարքում
Ես անկեղծ և սուրբ մի բան տեսա միայն -
Թշվառ մայրերի արտասուքն է այն:
Նրանք չեն մոռանալ իրենց գավակին,
Որ խորտակվել է արյունոտ արտում,
Որպես սգավոր ուռենին կրկին
Չի բարձրացնելու ճյուղերը տրտում⁸:

Այս սրտառուչ բանաստեղծությունը կրկին անգամ համոզում է, որ գրական այն երկերն են ապրում դարեդար, որոնցում արտացոլված է կյանքը ճշմարտացիությամբ ու գեղարվեստական բարձր մակարդակով, ու թվում է, թե այն մեր օրերի արձագանքն է՝ Արցախյան պատերազմի անմիջական հետքերով:

Ռուսական պոեզիան մշտապես է գտնվել Հ.Թումանյանի թարգմանական գործունեության առանցքում: 1899-ին հայերեն լույս տեսան Պուշկինի «Ջրահեղձը», «Օլեգի երգը», Ա. Կոլցովի «Գեղջուկի մտածմունքը» գործերը, որոնք ոչ միայն հաճելի նվեր էին ռուսական պոեզիայի հայ սիրահարներին, այլև թարգմանչական արվեստի գլուխգործոցներ:

Ուշագրավ երևույթ է Թումանյանի կողմից Ա.Պուշկինի «Ազատություն» ներբողից «Ատում եմ քեզ և քո գահը» քառատողի թարգմանությունը՝ Ստեփան Շահումյանի խնդրանքով: Այն տարածվել է ըմբոստ բանվորների շրջանում 20-րդ դարի սկզբին: Թարգմա-



⁸ Թումանյան Հ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 2, էջ 358:

ռուսասեր էր, նրա «Վերք Հայաստանին» հայ ժողովրդի տանջանքի ու տենչանքի արտահայտությունը լինելով հանդերձ՝ միաժամանակ մի ոգևորված ջատագովություն է ռուս ազգին ու նրա պետական ուժին, և առաջ քաշել Խ.Աբովյանին, կնշանակի հայերի մեջ արծարծել նաև սեր ու համակրանք դեպի ռուս ազգն...»⁶⁶:

Ռուսաստանը Հովհաննես Թումանյանի աստվածանվեր կանխազգացողությամբ մեծ առաքելության հրամայականով է հառնել և դարերի ընթացքում հավատարիմ է եղել իր պատմական պարտականությանը:

Աշխարհում համարյա ոչինչ չի փոխվել՝ առանձնապես հայ ժողովրդի, Հայաստան երկրի շուրջ: Նույն հարևաններն են՝ մի կողմից Օսմանյան Թուրքիան, մյուս կողմից՝ ալիևյան Ադրբեջանը՝ իրենց ցինիկ տարածքածարավ հոխորտանքներով ու նպատակներով: Ուստի չպետք է մոռանալ մեր ժողովրդի հանճարեղ զավակների մարգարեական խորհուրդները Ռուսաստանի վերաբերյալ, որի ազատասիրական ու մարդասիրական բարձրարվեստ գրականությունը հենց այդ գաղափարների գեղարվեստական պատկերն է:

Հ.Թումանյանը հայ և ռուս ժողովուրդների բարեկամության մասին միշտ հնչեցրել է մարգարեական իր խորհուրդը Ռուսաստանի վերաբերյալ՝ կոչ անելով հավիտյան քայլել ռուս ժողովրդի հետ:

⁶⁶ Նույն տեղում, էջ 207:

նությունը կատարվել է 1902թ. մայիսի մեկին, և թվում է, թե գրվել է հայերեն.

Самовластный злодей!
Тебя, твой трон я ненавижу,
Твою погибель, смерть детей
С жестокой радостию вижу. (Ода «Вольность»)

Ատում եմ քեզ և քո գահը,
Միահեծան գոռոզ ցար,
Եվ քո որդոց ու քո մահը
Պիտի տեսնեմ անպատճառ⁹:

Անդրադառնալով Պուշկինի պոեզիայի թումանյանական թարգմանությանը՝ ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը գրել է. «Ա.Ս. Պուշկինի ստեղծագործության հայկական ընկալումների պատմության մեջ Հովհաննես Թումանյանը բացառիկ կարևոր, եզակի տեղ է գրավում: Պուշկինի և հայ գրականության կապերի մասին խոսելիս մեր ոչ մի ուրիշ բանաստեղծի անուն այնքան հաճախ չի հիշատակվում, ինչքան Թումանյանին: Եվ ոչ ոք, բացի Թումանյանից, չի արժանացել «Հայոց Պուշկին» պատվավոր կոչմանը»¹⁰:

ՍՐԲԱԶԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Թումանյանի համար սրբազան անուններ են հանդիսացել «Ռուս և Ռուսաստան», «Ռուս գրակա-

⁹ Նույն տեղը, էջ 373:

¹⁰ Ջրբաշյան Էդ., Պուշկինը և հայ բանաստեղծները, Եր., 1999, էջ 82:

նություն» հասկացությունները: Ռուսաստանի դերն առանձնապես դրական է գնահատել Արևելյան Հայաստանի փրկության գործում, 1826-1828թթ. ռուսպարսկական պատերազմի արդյունքում: Ապա ընդգծել է ռուս դասական գրականության բարձր արվեստը: Այդ երկու աստղալույս երևույթները ծիածանվել են Մեծ Լոռեցու հոգում: Պատահական չեն նրա ասույթները Ռուսաստանի և նրա բարձր արվեստի մասին: Այս կապակցությամբ բանաստեղծի դուստրը՝ Նվարդ Թումանյանը, հիացմունքով է խոսում հոր մասին ու հպարտությամբ բերում նրա իմաստուն ասույթները, որոնցից մեջբերում ենք մի քանիսը՝ ասված բոլոր ժամանակների համար¹¹. «Ռուս» բառի տակ հայը հասկանում էր փրկություն, ազատություն» (էջ 9), «...Եթե մեր բազմադարյան տառապանքի մեջ մի օգուտ ու օգնություն ենք տեսել՝ էդ եղել է Ռուսաստանը», «Մեծ պետություններից Ռուսաստանն է միակ պետությունը, որ իր ընթացքով դեռ ազգեր չի խորտակել, այլ միայն ազգեր է ազատագրել ու կյանքի կոչել» (էջ 13), «Ռուս բանաստեղծներից ամենամեծը Պուշկինն է, Եվրոպայում նման մեծ բանաստեղծ չկա» (էջ 33), «Պուշկինը ազգային մեծ բանաստեղծ է, ազգային բանաստեղծը պետք է իրեն երկրից լինի, հարազատ, ազգային և համաշ-

¹¹ Թումանյան Ն., Հովհ. Թումանյանը և ռուս գրականությունը, Եր., 1956:

ճակատագրին, սերտաճած ժողովուրդների համերաշխության ու համագործակցության անխաթար ընթացքին: Այդ համապատկերին միանգամայն ուրիշ վերաբերմունք ունի նա ռուս ժողովրդի, նրա առաջադեմ մտավորականության հանդեպ ոչ միայն իր ապրած ժամանակի, այլև մերօրյա և ապագայի հրամայականով հնչեցված: Այսպես՝ դեռևս 1911թ. խոսելով հայկական հարցի մասին՝ նա գրել է. «Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, հալածանքների ու գաղթականությունների հարց է, նա գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր է: Եվ նրա հաջողությունը միշտ կապված է եղել Ռուսաստանի հաջողության հետ: Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական զազանություններին ու հայկական սարսափներին: Նա պատասխանատու է հայ ժողովրդի ծով արյան ու մարդկության պատմության առաջ»⁶⁵:

Անդրադառնալով Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմավեպին՝ Հ.Թումանյանը ամենատեսությամբ ընդգծել է, որ Աբովյանի մասին խոսել, նշանակում է խոսել ռուս և հայ ժողովուրդների բարեկամության մասին. «Խ.Աբովյանը մի մոլեռանդ

⁶⁵ Թումանյան Հ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, էջ 167:

մեկնեց անմահություն: Նրա անունը լայնորեն հայտնի է ոչ միայն սովետական և ժողովրդա-դեմոկրատական երկրներում, այլև այդ սահմաններից շատ հեռու: Նրա բանաստեղծությունները կարդում են սլավոնական, եվրոպական և ասիական լեզուներով: Նրա երգերը երգում են շատ ժողովուրդներ: Նրա պոեմները օպերաների նյութ են ծառայել: Ժողովուրդների եղբայրության, բարեկամության նրա քարոզը օգնում է իրենց մշակույթի և ազատագրության համար մարտնչող ժողովուրդներին: Հայ մեծ բանաստեղծը մեկնեց անմահություն: Եվ ովքեր նրան առանձնապես ճանաչելու բերկրանք են ունեցել, նրա մաքուր, լուսավոր հոգին, նրա հմայիչ կերպարը, նրա ձայնի հնչումը, նրա ժպիտի շոյանքը սրբորեն կպահեն՝ քանի դեռ ապրում են այս աշխարհում...»⁶⁴:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հ.Թումանյանի հողվածներն ու ելույթները, նամակներն ու գրառումները ռուս գրականության, ռուս ժողովրդի, Ռուսաստանի պատմական առաքելության մասին այնքան են ծավալուն ու կենսական, որ ինչքան էլ թերթես, ըմբռնանես, ուսումնասիրես, երբեք չեն սպառվի ու չեն հնանա, որովհետև դրանք մարգարեական խորհուրդներ են՝ առնչված սեփական ժողովրդի

⁶⁴ Նույն տեղում, էջ 896:

խարհային խնդիրներ պիտի շոշափի, լայն հորիզոն պիտի ունենա և միևնույն ժամանակ բանաստեղծ-մտածող-փիլիսոփա լինի» (էջ 36):

Այստեղ կարելի է ավելացնել Թումանյանի գնահատականները նաև հանճարեղ Պուշկինի ստեղծագործության վերաբերյալ: Կարևոր ենք համարում բերել Նվարդ Թումանյանի համոզիչ դիտարկումը. «Հովհաննես Թումանյանը պուշկինյան տրադիցիաների բանաստեղծ է»¹²:

Հետաքրքիր է իմանալ, որ Պուշկին-Թումանյան մեծություններին անդրադառնալիս՝ Վ.Տերյանը հիացմունքով է խոսել: Գրականագետ Արտ.Կարինյանն իր հուշերում վկայում է, որ Վ.Տերյանը Պուշկինի մասին խոսելիս անպայմանորեն նշում էր Հ.Թումանյանի անունը, և առաջինը հենց Տերյանն էր ասել. «Թումանյանն էլ մեր Պուշկինն է, հայ ժողովրդի ամենապայծառ և մեծ բանաստեղծը»¹³:

Տեղին է նաև վերհիշել Վ. Տերյանի 1914թ. «Հայ գրականության գալիք օրը» զեկուցումը, որտեղ կարդում ենք. «Այսօր Թումանյանը իր լեզուն հասցրել է այն բյուրեղանման պարզության, որը մոտեցնում է նրան

¹² Նույն տեղը, էջ 38:

¹³ Թումանյանը ժամանակակիցների հուշերում. Եր., 1969, էջ 789:

Պուշկինին, և որը նրա գերագույն արժանիքներից մեկը պիտի համարվի»¹⁴:

Հ.Թումանյանն ինչպես սեփական ստեղծագործության հանդեպ էր պատասխանատու, այնպես էլ վարվում էր թարգմանության ասպարեզում: Դրա լավագույն վկայություններից են Պուշկինի «Ջրահարսը», «Օլեգի երգը» (թարգմ. 1899) և «Ձմեռվա իրիկունը» (թարգմ. 1909): «Ձմեռվա իրիկունը» բանաստեղծությունը Թումանյանը համարել է անմահ պոետի գլուխգործոցը: Պատահական չէ այդ գործի բարձրարվեստ թարգմանությունը նրա կողմից: Նպատակահարմար ենք գտնում բերել պուշկինյան այդ հրաշալի գործի բնագիրը և թումանյանական թարգմանությունը.

ЗИМНИЙ ВЕЧЕР

Буря мглою небо кроет,
Вихри снежные крутя;
То, как зверь, она завоет,
То заплачет, как дитя,
То по кровле обветшалай
Вдруг соломой зашумит,
То, как путник запоздалый,
К нам в окошко застучит.

Наша ветхая лачужка
И печальна и темна.
Что же ты, моя старушка,
Приумолкла у окна?

¹⁴ Տերյան Վ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 3, Եր., 1975, էջ 89:

Ս.Գորոդեցկին, ելնելով գրականության միաբանող ուժից, գրում է. «Բանաստեղծությունն ու արվեստը միացնում էին ռուս կուլտուրային մոտիկ կանգնած մարդկանց: Հովհաննես Թումանյանը այդ միավորման հոգին էր»⁶³:

1919թ. նշվեց Հովհաննես Թումանյանի 50-ամյա հոբելյանը: Գորոդեցկին նկարագրում է, թե ինչպես էին մեծարում հանճարեղ պոետին ոչ միայն հոբելյանին նվիրված նիստերում, այլև տարբեր միջոցառումների ժամանակ: Հ.Թումանյանի 50-ամյա հոբելյանի առթիվ Գորոդեցկին գրել է առանձին ծավալուն հոդված, որը մեծարանքի խոսք է ոչ միայն նրա ստեղծագործական սխրանքի մասին, այլև հպարտության ու երախտագիտության խոհ՝ ի փառս մի այնպիսի գործչի, որպիսին ժողովուրդների կենսափիլիսոփայության ջահակիր Թումանյան-մարգարեն է: Գորոդեցկու այդ հոդվածը տպագրվել է «Զակավկազսկոյե սլովո» թերթի 1919թ. 27-րդ համարում:

Ռուս անվանի մտավորականը Թումանյանի մասին իր բազմաբովանդակ հուշերն ավարտում է նրա հետ Մոսկվայի հիվանդանոցում տեղի ունեցած հանդիպման նկարագրությամբ: Ազնիվ բարեկամի սրտառու խոսք է այդ պատկերը, որն ավարտվում է բանաստեղծական այսպիսի ընդհանրացմամբ. «Բանաստեղծը

⁶³ Նույն տեղում, էջ 889:

Գորոդեցկին հուշերում զգալի տեղ է հատկացրել նաև հայ-վրացական մտավորականների փոխադարձ հարգանքին ու համատեղ ստեղծագործական աշխատանքի կարևորությանը: Նա նշում է, թե ինչպես 1918 թվականը նշանավորվեց վրաց բանաստեղծների հետ Թումանյանի բազմաթիվ հանդիպումներով, զրույցներով ու ժողովներով: Հավաքներին, բացի «Կապույտ եղջյուրների» խմբից, մասնակցում էին նաև բանաստեղծներ Սանդրո Էուլին, Իոսեբ Գրիշաշվիլին, նկարիչներ Օսեփ Շառլեմանը, Լադո Գուդիաշվիլին, արձանագործներ Իակոբ Նիկոլաձեն ու Գեորգի Կեպինովը: Այդ թվականին Հ.Թումանյանը գրեց «Վրաստանի ոգին», ապա՝ «Վրաց պոետներին» հիասքանչ բանաստեղծությունները:

1918 թվականին Հ.Թումանյանն իր ոուսերեն հրատարակված «Փարվանա» պոեմի շապիկի վրա գրում է ձոն՝ նվիրված Ս.Գորոդեցկու կնոջը՝ Նիմֆա Գորոդեցկուն: Նա երախտագիտությամբ է հիշում այդ ընծան՝ բերելով ձոնը.

Եկաք ու ընկաք
Մի նոր դրժընդակ
Փոթորկի առջև,
Ուր կիտվում են դեռ
Ահեղ, շանթաբեր
Ամպերը սև-սև⁶²:

⁶² Նույն տեղում, էջ 889:

Или бури завываньем
Ты, мой друг, утомлена,
Или дремлешь под жужжаньем
Своего веретена?

Выпьем, добрая подружка
Бедной юности моей,
Выпьем с горя; где же кружка?
Сердцу будет веселей.
Спой мне песню, как синица
Тихо за морем жила;
Спой мне песню, как девица
За водой поутру шла.

Буря мглою небо кроет,
Вихри снежные крутя;
То, как зверь, она завоет,
То заплачет, как дитя.
Выпьем, добрая подружка
Бедной юности моей,
Выпьем с горя; где же кружка?
Сердцу будет веселей.

ՋՄԵՌՎԱ ԻՐԻԿՈՒՆԸ

Հողմը մեզով երկինքն առնում,
Գալարում է բուքը ձյան,
Մին՝ մանկան պես լաց է լինում,
Մին՝ ոռնում է զերթ գազան:
Մին՝ վայրենի սուլում պես-պես,
Աղմըկում է տանիքում,
Մին՝ ուշացած ճամփորդ, ասես,
Լուսամուտն է նա թակում:

Մեր խրրճիթը, աղքատ ու հին,
Ե՛վ մթին է, և՛ տըխուր.

- Ի՞նչ ես նըստել պատի տակին,
Իմ պատավըս, էդպես լուռ:
Հոգնե՞լ ես դու փոթորիկի
Ոռնոցներից խելագար,
Թե՞ նիրհում ես քո իլիկի
Բըզզոցի տակ միալար:

Արի խըմե՛նք, բարի ընկեր
Իմ սև, ջահել օրերի,
Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր,
Սիրտներըս բաց կըլինի:
Երգի՛ր՝ ո՞նց էր ապրում խաղաղ
Հավթը ծովի էն ափին,
Երգի՛ր, ո՞նց էր աղջիկը վաղ
Ջուրը գնում մինչ արփին:

Հողմը մեզով երկինքն առնում,
Գալարում է բուքը ձյան,
Մին՝ մանկան պես լաց է լինում,
Մին՝ ոռնում է գերթ գագան:
- Արի խմե՛նք, բարի՛ ընկեր,
Իմ սև՛, ջահել օրերի,
Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր,
Սիրտներըս բաց կըլինի¹⁵:

20-րդ դարի սկզբին, երբ ծաղկման գագաթնա-
կետին էր հասել ռուսական պոեզիայի հսկաներից
մեկի՝ Ալ.Բլոկի քնարը, չէր կարող չարժանանալ Մեծ
Լոռեցու ուշադրությանը: 1921թ. նա բարձր արվեստով
թարգմանում է Բլոկի «Ծովի երգը» հյուսվածքը՝ արժա-
նանալով հայ ընթերցողի ջերմ ընդունելությանը:

¹⁵ Թումանյան Հ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 2, էջ 382:

խորունկ իմացության առկայությամբ, ձեռք բերեց
համամարդկային գծեր»⁵⁹:

Ս.Գորոդեցկին Հ.Թումանյանին մեծարում է նաև
որպես ժողովուրդների բարեկամության մեծ քարոզիչ,
որի ձայնն առանձնապես բոցավառ էր հնչում
պատմական ծանր պահերին: Գորոդեցկին ընդգծում է.
«Նա միշտ անկեղծորեն հավատում էր կովկասյան
ժողովուրդների բարեկամությանն իրար և ռուս
ժողովրդի հետ, հասկանալով, որ նրանց մեջ գոտություն
ու թշնամանք արհեստականորեն է հարուցվում»⁶⁰:

Ս.Գորոդեցկին հուշերում բերում է հատվածներ
1920թ. դեկտեմբերի 18-ի Հ.Թումանյանի հայտնի
նամակից՝ ուղղված Հայաստանի հեղկումին. «Ամենքից
լքված ու հուսահատված հայ ժողովուրդը իր հայացքը
դարձրեց դարձյալ դեպի Ռուսաստան: Եվ եկավ նա, նոր
Ռուսաստանը: Այժմ նոր, ազատ Ռուսաստանից է
կախված ոչ միայն հայ ժողովրդին ազատել վերահաս
վտանգից՝ այլև ապահովել նրա անկախ քաղաքական
կյանքը, խաղաղ վերջացնել հայկական արյունոտ
խնդիրը, հայ ժողովրդին հաշտեցնել մահմեդական
հարևանների հետ և արդար աշխատանքի ճանա-
պարհով առաջնորդել դեպի նոր կյանք»⁶¹:

⁵⁹ Նույն տեղում, էջ 884:

⁶⁰ Նույն տեղում, էջ 885:

⁶¹ Նույն տեղում, էջ 888:

է, որ Հ.Թումանյանը իրենց ջոկատին ուղեկցեց մինչև կայարան և հրաժեշտ տալիս պահ տվեց, որ պահպանենք երեխաներին, ինչպես նաև քուրդ երեխաներին, որ անտիրական են դարձել, ինչպես հայ երեխաները:

Գորոդեցկին նկարագրում է հայոց լեռնաշխարհի գեղեցկությունը, միաժամանակ ցավով պատկերում հայ փախստականների թշվառությունը: Այդ օրերին Վան էր մեկնել նաև Թումանյանի որդին՝ Արտավազը, որն իր ընկերների հետ հավաքում էր որբացած երեխաներին և ուղարկում Իգդիր:

Անվանի ռուս բանաստեղծը ավստասանքով հայտնում է, որ 1916-ի աշնանը ռուսական բանակը հեռանում է Վանից: Նա նկարագրում է հայ բնակչության գաղթը Վանից՝ այն համարելով ավելի սարսափելի, քան 1915-ի գաղթն էր:

Իր հուշերի «Հովհաննես Թումանյանը Հայաստանի ժողովրդական բանաստեղծ» բաժնում Գորոդեցկին Մեծ Լոռեցուն համարում է համաշխարհային անվանի արվեստագետների շարքին պատկանող գրող, բարձր գնահատում նրա ստեղծագործությունը՝ ընդհանրացնելով. «Հովհաննես Թումանյանի պոեզիան մնաց կոնկրետ ու իր ազգային սահմանների մեջ նպատակասլաց և դրանով իսկ, իր ժողովրդի պատմության ու կյանքի

Տարբեր առիթներով Հ.Թումանյանն առնչվել է ռուս գրական միջավայրին՝ արտահայտելով իր վերաբերմունքը տարաբնույթ երևույթների հանդեպ: Այսպես՝ 1910թ. «Հորիզոն» թերթի մայիսի 9-ի 99-րդ համարում տպագրվում է Թումանյանի «Թե ինչպես իմ «Անբախտ վաճառականները» դարձավ «Американская» հոդվածը: Մեծ Լոռեցին հայտնում է, թե ինչպես պ. Արմանը «Հորիզոն»-ի № 95-ում տպագրված հոդվածում՝ ուղարկված Մոսկվայից, գրում է, որ «Անբախտ վաճառականները» թարգմանված ու տպագրված է ռուսերեն և ո՛չ գրած է հայերենից, ո՛չ էլ իր անունն է հիշած, այլ հրատարակված է որպես ամերիկյան ժողովրդական գրույց և հարցնում է՝ ես գիտե՞մ էդ մասին, թե չէ»¹⁶:

Եվ Թումանյանն իրեն հատուկ իմաստությամբ ու հումորով նշում է, որ գիտե, և դա իր մշակած գործն է: Խորհրդածելով երևույթի մասին՝ նա ավելացնում է. «Մտածեցի, գուցե армянская բառն է, որ տպագրական սխալով դարձել է американская, մանավանդ լսած էի տիկնոջ մասին, կարծում էի մեջտեղը մի թյուրիմացություն կա և չէի ուզում հրապարակավ էդքան անախորժ մի նկատողություն անել: Խնդրեցի երաժշտագետ պ. Ռ. Մելիքյանին, որ անձամբ ճանաչում է տիկնոջը, իմանա, թե էս ինչպես է պատահել: Ռ. Մելիքյանը իմացավ ու

¹⁶ Թումանյան Հ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, էջ 95:

հայտնեց, որ տիկին Выставкина-ն մեղք չունի դրա մեջ, հրատարակիչներն են էդպես արել: Երևի մտածել են, որ американская գրելով կդարձնեն заграничный товар... Ահա եղածը, ինչ որ ինձ հայտնի է: Ես սպասում էի, որ հարգելի տիկինը ինքը կխոսեր էդ մասին, բայց չգիտեմ ինչն¹⁷ և նա չխոսեց մինչև այժմ: Շատ կխնդրեի, որ գոնե այժմ խոսեր»¹⁷:

ԴՐԱՄԲՅԱՆԻՉՄԻ ՉԱՐԻՔԸ

Ռուս գրականության խմորումներին անդրադառնալու առիթ էին Հ.Թումանյանի դեմ դրամբյանիզմի բթամիտ, անիմաստ հոխորտանքն ու վիրավորանքը: Լրջորեն ու ցասամար պատասխանելով Ռ.Դրամբյանին ու Ս.Հայկունուն՝ Թումանյանը հեգնանքով ընդգծում է. «Պարոն Ռ. Դրամբյանն ու չգիտեմ ինչ՝ Ս.Հ.-ն, կամ մի խոսքով ասենք՝ դրամբյանիզմը, գտել են, որ հայոց «գրական մեծությունները» բանագործություններով են պարապում, ժողովրդական ստեղծագործություններն առնում են ու չնչին փոփոխություններով կամ բառացի հրատարակում իբրև իրենց ինքնուրույն գրվածք: Էդ երևույթը անվանում են զզվելի թալան, կեղտոտ ուղի, ավերիչ ժանտախտ, գրական շանտաժ և այլն, և այլն և «Մշակ»-ի ու «Հովիտ»-ի էջերում հայոց բարեպաշտ ազգին հորդոր են կարդում առնել էս ազգային դժբախ-

¹⁷ Նույն տեղում, էջ 96:

Ո՛վ Հայաստան, որ զնգում ես արյա՛մբ, հրո՛վ,
Ո՛վ Հայաստան, որ չար բախտից չես պարտվում⁵⁷:

Նշենք, որ այս բանաստեղծությամբ է բացվում Ս.Գորոդեցկու «Անգել Արմենիի» գիրքը, որ լույս է տեսել 1918թ. Թիֆլիսում և նվիրվել Հ.Թումանյանին:

Գրքի առաջին էջի վրա Ս.Գորոդեցկին մակագրել է. «Ձեզ եմ նվիրում, լուսավոր բարեկամ, այս գիրքը ոչ միայն այն պատճառով, որ մինչև սրտիս խորքը հմայված եմ Ձեր անձնավորությամբ, այլև այն պատճառով, որ Ձեր անունը գաղափար է, իմ հայրենիքի բարեկամությամբ հայոց հարության գեղեցիկ գաղափարը»⁵⁸:

Ս.Գորոդեցկու «Անգել Արմենիի» ժողովածուն այս ընծայականով պահպանվում է Թումանյանի տունթանգարանում: 1916թ. ապրիլի վերջին Ս.Գորոդեցկին կատարում է իր պաշտոնական առաջին ուղևորությունը դեպի Վան: Հ.Թումանյանը Գորոդեցկու պատվին կազմակերպում է հրաժեշտասեղան մոտիկ բարեկամների շրջանում, որոնց մեջ էին Դերենիկ Դեմիրճյանն ու Գարեգին վարդապետը: Գորոդեցկին հիշում է, թե ինչպես բարի երթի կենացների մեջ ջերմորեն հնչեց հայրուս ժողովուրդների բարեկամությունը և առանձնապես՝ ի պատիվ Վալերի Բրյուսովի, որի աշխատանքը բարձր էր գնահատում Թումանյանը: Գորոդեցկին գրում

⁵⁷ Նույն տեղում, էջ 873-874:

⁵⁸ Նույն տեղում, էջ 874:

տերը. նրա առաջին կենացը Հայաստանի և Ռուսաստանի բարեկամությունն էր:

Ինչպես բարձրաձայնում է Գորոդեցկին, այդ երեկոյից դուրս եկավ ցնցված ու թնավորված, որ իր ճամփան պարզ դարձավ իր համար:

Այդ հանդիպումից մի քանի օր անց՝ ապրիլի 13-ին, Գորոդեցկին Թումանյանին ներկայացրեց իր հետևյալ բանաստեղծությունը.

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ինչպես անհայտ ու անձանոթ կնոջ դիմաց՝
Կանգնած եմ ես հուզումնալից թրթռոցով,
Խոսքն առաջին վախենում է պոկվել հիմա,
Աչքս է շաղվում այս առաջին իմ վառ հայցով:

Քեզ ճանաչե՛լ, Քեզ ըմբռնե՛լ: Գրկե՛լ սիրով
Եվ բաց անել իրար հանդեպ դռներ ոսկե:
Ո՛վ Հայաստան, որ զնգում ես արյամբ, հրով,
Ո՛վ Հայաստան, ցանկանում եմ սիրել ես քեզ:

Ես գլուխըս խոնարհում եմ դարդերիդ դեմ,³
Գեղեցկության քո բերանին հավում կրկին:
Ոնց է եղել, որ տակավին քեզ չգիտեմ,
Երկիր-կայծքա՛ր, երկի՛ր-արմա՛տ, երա՛զ-երկիր:

Քե՛զ եմ գալիս: Քեզ ջերմ ողջո՛ւյն: Իմ աչքն է սուր:
Իմ սիրտն է տաք: Պսակներդ են ցուլանք տալիս՝
Քո մարգարտե, ադամանդե լեռները սուրբ,-
Դեպի նրանց և քո ծայրերն եմ ես գալիս:

Քեզ ճանաչե՛լ: Քեզ ըմբռնե՛լ: Գրկե՛լ սիրով:
Լսել, թե ոնց հարությունն է վրադ թնում:

տության առաջը: Էս սրբազան ջհաթը մասնավորապես ուղղված էր ինձ վրա իբրև նրա համար, որ ժողովրդական նյութեր եմ առել Ս. Հայկունու ժողովածուից, ինչպես 1910 թվականի «Մշակ»-ի մի քանի համարում ցույց էր տալիս Ռ.<ուբեն> Դրամբյանը, ու գրեթե բռնացի հրատարակել եմ իմ անունով, առանց հիշելու, թե ժողովրդական է, ապա թե նրանից հետո Ս. Հ.-ն մեջտեղ եկավ «Հովիտ»-ի էս տարվան № 16-ում և հայտարարեց, թե ես «Գառնիկ ախպեր» հեքիաթը թարգմանել եմ ռուսերենից ու տպել եմ իբրև ինքնուրույն գրվածք: «Մշակ»-ն էլ երկու անգամ իրար ետևից էս մասին ավետեց իր «հառաջադիմական» ընթերցողներին»¹⁸:

Մեծ Լոռեցին, ըստ էության քննադատելով հետամնացությունն ու չարամտությունը, մատնանշում է, որ նման չարիք գոյություն ունի նաև ռուս իրականության մեջ: Եվ բերում է կոնկրետ օրինակ՝ առնչված մեծանուն Ա.Ս. Պուշկինի հետ: Մի տխրահոշակ Каченовский հանդես է գալիս Житель Бутырской слободы կեղծ անունով, տպում իր «Կրիստիկա»-ն «Вестник Европы» 1820 թ. № 11-ում, զրպարտում Պուշկինին: Մեծ Լոռեցին իրեն հատուկ հումորով գրում է. «Ռուսաց գրականության պատմությունն ասում է. «Житель Бутырской слободы» увидел в мысли Пушкина воспользоваться

¹⁸ Նույն տեղում, էջ 190-191:

русским сказочным элементом просто неприличие, бедствие и явление отвратительное...

Էնթան նման «Մշակ»-ի Դրամբյանին ու «Հովիտ»-ի Ս. Հ.-ին, որ քիչ է մնում կարծեմ, թե ես էլ Պուշկին եմ¹⁹: Շարունակելով խոսքը՝ նա միաժամանակ քննադատում է հայ իրականության մեջ գոյություն ունեցող գավառականությունը, որին հատուկ է չար նախանձը: «Իհարկե, - գրում է Թումանյանը, - ներողություն եմ խնդրում իմ սիրելի հայրենակիցներից, որ էս տեսակ մի համեստություն անցկացրի մտքովս: Ես լավ գիտեմ, որ նրանք թույլ չեն տալ բնավ, որ Թիֆլիսի էս ինչ փողոցում էս ինչ համարի տանը մի ուրիշ Պուշկին լինի, էն էլ հայ»²⁰:

Հ.Թումանյանը զարմանում է, որ և՛ հայ, և՛ ռուս իրականության մեջ կան պատահական մտավորականներ, որոնք չեն հասկանում բանավոր ստեղծագործության նշանակությունը գրավոր գրականության զարգացման համար: Այն դեպքում, երբ դանիացի մեծատաղանդ Անդերսենն արդեն հրաշքներ էր գործում ստեղծագործական իր կյանքում:

Ռուս իրականության մեջ հակապուշկինյան ոռնոցը հասել էր մի այնպիսի աստիճանի, որ դրա դեմ ցատումով հանդես էր եկել անվանի գործիչ Պյոտր Վյազեմսկին: Այդ մասին Մեծ Լոռեցին գրում է.

¹⁹ Նույն տեղում, էջ 193:

²⁰ Նույն տեղում, էջ 193:

գնում էք Հայաստանի տնավեր հին հայրենիքը: Գրեք դրա մասին:

- Ուզում եմ, բայց բան չգիտեմ:

- Դուք բանաստեղծ եք: Պոեզիան հենց կյանքի ճանաչողությունն է, որ կա: Այլապես նա պետք չի: Դուք կտեսնեք զարհուրելի կյանք, ժողովրդի կյանք՝ հասած մահվան եզրին: Գրեք էն մասին, ինչ կտեսնեք: Էդ էլ կլինի պոեզիա»⁵⁶:

Ս.Գորոդեցկին գրում է, որ Հ.Թումանյանը, չնայած այդ վտանգված տարիներին, հավաստում էր հայ ժողովրդի ապրելու ոչնչով չկոտրվող կամքը, նա խոսում էր ռուս ժողովրդի օգնության մասին, հայերի հավատից:

Գորոդեցկին միաժամանակ ընդգծում է, որ Հ.Թումանյանը տարբերում էր արքաների և հասարակ ժողովուրդների ձգտումներն ու վարքագիծը, խիստ խարազանում այն ցարերին, ովքեր հայտարարում էին, որ իրենց պետք է Հայաստանն առանց հայերի՝ նրանց հակադրելով ռուս ժողովրդի ազնիվ մղումները Հայաստանի, հայ ժողովրդի հանդեպ:

Ս.Գորոդեցկին, բերելով Թումանյանի այս մտորումները, հրճվանքով նշում է, թե ինչպես պոետորիբունը, իրեն գրկելով, հրավիրեց բացված սեղանի շուրջը՝ մտցնելով իր համերաշխ ընտանիքի գիրկը ու դարձավ գեղեցկառատ սեղանի զվարթ ու հյուրընկալ

⁵⁶ Նույն տեղում, էջ 872-873:

- Համեցեք ներս:

Մեղանատան սեմին ինձ սիրալիր հանդիպեց նրա տիկինը: Հովհաննես Ֆադեևիչը ինձ ծանոթացրեց իր դուստրերին՝ Անուշին, Նվարդին և փոքրիկ Արփինեին:

- Էս էլ Արտավազդ տղաս: Նույնպես Վան է գնում: Միասին կաշխատեք»⁵⁵:

Այնուհետև զրույցը շարունակվում է Թումանյանի աշխատասենյակում: «Ես հիանալի զրուցակիցներ շատ եմ ճանաչել, - գրում է Գորոդեցկին, - բայց Թումանյանն ուներ այնպիսի հրաբորբոքություն, այնպիսի անկեղծություն, որ նրա հետ զրուցելը գեղարվեստական հաճույք էր: Նա կարծես թե բացում էր իր հոգու դռները և զրուցակցին հրավիրում չթաքնվել իրենից: Դե՛ ո՞նց կարելի է թաքնվել այդ պայծառ ու շիտակ հայացքից: Ես չեմ սիրում թաքնվել զրուցակցից: Բայց և այնպես մի թաքուն միտք ունեի՝ արդյոք Հովհաննես Թումանյանը գիտե՞, որ ես Հայաստան եմ եկել ռուս առաջավոր գրականության հետ կոված: Ինչ-որ ակնարկներով ես մի երկու անգամ սկսեցի շոշափել այս թեման: Նա քնքշալից, բայց վճռականորեն խոսքը շուռ տվեց դրանից և ավարտեց մի նախադասությամբ, որը փարատեց իմ բոլոր տագնապները.

- Լինում է, որ մարդ միայն դժվար ճամփին է գտնում ուղիղ ճանապարհը: Դուք բանաստեղծ եք: Դուք

⁵⁵ Նույն տեղում, էջ 872:

«Պուշկինի բարեկամ իշխան Վյազեմսկին առաջարկում էր ուժով լռեցնել էդ իդիոտներին, իսկ Պուշկինն ինքը, տեսնելով, որ քննադատը չի կանգնած իր առջև, այլ բթությունը, որ դուրս է եկել իր կոպիտ ձեռքը բարձրացրել միայն հարվածելու հանուն հայրենիքի ու գրականության, նրա հաստ ու տափակ ճակատը խարանեց մի շարք էպիգրամաներով, որոնք հայտնի են «На Каченовского» ընդհանուր վերնագրով»²¹: Նա իր խոսքի վերջում բերում է Պուշկինի էպիգրամներից մեկը՝ ուղղված Կաչենովսկուն.

Нахальство, Аристарх, таланту не замена,
Я буду все поэт, тебе наперекор,
А ты останешься все тот же крохобор,
Плюгавый выползок из гузка Дефонтена²².

ՀԱՅ ՊՈՆԶԻԱՆ ԲՐՅՈՒՍՈՎՅԱՆ ԾԻՐԵՐՈՒՄ

Հ. Թումանյանը ողջունել ու բարձր է գնահատել այն գրողներին, ովքեր և՛ իրենց սեփական ստեղծագործությամբ, և՛ թարգմանչական գործունեությամբ նպաստել են ժողովուրդների համերաշխության ու համագործակցության ամրապնդմանը: Նման անհատականություններից է ռուս տաղանդավոր բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ, հայագետ Վալերի Բրյուսովը: Պրոֆեսոր Պողոս Մակինցյանի օգնությամբ նա սովորեց

²¹ Նույն տեղում, էջ 195:

²² Նույն տեղում, էջ 195:

հայերեն, ծանոթացավ հայ դարավոր պոեզիային՝ դառնալով նրա մեծ բարեկամներից ու տարածողներից մեկը: 1915թ. հունիսին Բրյուսովը Մոսկվայի հայկական կոմիտեի առաջարկությամբ սկսեց աշխատել «Հայ պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» անթոլոգիայի համար՝ հայ բանաստեղծների գործերը թարգմանելու և այդ անթոլոգիան խմբագրելու վրա: Խնդրելով ու հորդորելով ժամանակի ռուս բանաստեղծներին՝ նա 1916թ. հրատարակեց ժողովածուն՝ այն համարելով սրտաբուխ նվեր գալիք սերունդներին: Բրյուսովը ժամանեց Բաքու, Թիֆլիս, Երևան, Էջմիածին, որտեղ հայոց պատմության ու պոեզիայի մասին հանդես եկավ զեկուցումներով, ինչպես նաև կարդաց հայ պոեզիայից կատարած իր թարգմանություններից...

Ռուս ականավոր գրողին ողջունեցին Հ.Հովհաննիսյանը, Հ.Թումանյանը, Ալ.Շիրվանզադեն և ուրիշ գրողներ: Իր զեկուցման մեջ Վ.Բրյուսովն ընդգծել է. «Հայաստանի ուսումնասիրության մեջ ես գտա հոգևոր վսեմ ուրախությունների անսպառ աղբյուր... Որ, իբրև պատմաբան, իբրև գիտության մարդ, ես Հայաստանի պատմության մեջ տեսա մի ամբողջ ուրույն աշխարհ, որտեղ հազարավոր խիստ հետաքրքրական, բարդ հարցեր բորբոքում էին գիտական հետաքրքրությունս, իսկ իբրև բանաստեղծ, իբրև արվեստագետ, Հայաստանի պոեզիայում ես տեսա զեղեցկության նույնքան ուրույն մի աշխարհ, մի նոր, մինչ այդ ինձ

քաղաքի: Իրեն առանձնակի էր պահում բնակչության ռուսական խումբը»⁵⁴:

Թիֆլիսի կենցաղն ու սովորությունները նկարագրելուց հետո Գորոդեցկին հայտնում է, որ երրորդ անգամ ինքը Թիֆլիս է ժամանել 1916թ., երբ քաղաքն արդեն անճանաչելի էր դարձել որպես կապիտալիստական զարգացող քաղաք և պատկանում էր գործարար մարդկանց:

Ս.Գորոդեցկին այդ օրերին նման աշխույժ քաղաքում իրեն մենակ էր զգում: Նշանակվելով Վանում՝ նրա առաջին հանդիպումը լինում է տեղի նահանգապետ Կոստանդին Սահակի Համբարձումյանի հետ: Ապա քաղաքի իրարանցումի մեջ նա հանդիպում է Հ.Թումանյանին, որը մտահոգված էր Վանում տեղի ունեցած ծանր իրադարձություններով: Հենց այստեղ էլ Ս.Գորոդեցկին մոտենում է Մեծ Լոռեցուն ու ծանոթանում հետը: Թումանյանի առաջարկով երեկոյան Գորոդեցկին այցելում է մեծ բանաստեղծի տուն՝ Վոզնեսենսկայա - 18 հասցեով: Ռուս բանաստեղծն ահա թե ինչպես է ներկայացնում Թումանյանի հյուրընկալությունը. «Հանրահայտ է Թումանյան ընտանիքի հյուրասիրությունը: Երեկոյան երբ գնացի նրա մոտ, արդեն սպասելով ինձ երկրորդ հարկի պատշգամբում՝ նա դուռը լայն բաց արեց.

⁵⁴ Նույն տեղում, էջ 869:

թյուն չի ունեցել մասնակցել այդ ժողովածուի թարգմանչական գործին:

Հետաքրքիրն այն է, ինչպես նշում է Ս.Գորոդեցկին, որ իր քրոջ ամուսինը՝ Ա.Կ. Վասիլևը, Թիֆլիս քաղաքի գլխավոր ճարտարապետն էր, որը կողմնակից էր դասական ճարտարապետության: Նրա կառուցած բազմաթիվ դպրոցական և հիվանդանոցային շենքերը մինչև այսօր էլ կանգուն են: Որպես նրա տեխնիկական գլուխգործոց՝ մինչև այսօր մնում է այն կամուրջը, որ ձգվում է բուսաբանական այգու կիրճի վրա: 1902թ. և 1908թ. Գորոդեցկին հյուրընկալվել է քրոջ ընտանիքում:

20-րդ դարասկզբի Թիֆլիս քաղաքի մասին հետաքրքիր, ճանաչողական տեղեկություններ է հայտնում Ս.Գորոդեցկին: Թիֆլիսի գեղեցկությունը համեմատելով Ֆլորենցիայի հետ՝ նա նշում է. «Քաղաքի բնակչությունը բաժանված էր երեք մասի: Վրացիներին էին պատկանում շուկաներն ու դուքանները, իշխանական ու ազնվականական վերջին բները, որ դարասկզբին աղքատացել էին՝ հետամնաց գյուղատնտեսությամբ մշակվող կավածքների թույլ շահույթների պատճառով: Գոլովինյան պողոտայի շքեղ նորակառույցները, խոշոր խանութները, շուկայի լավագույն կրպակներն էլ պատկանում էին հայերին: Հայկական կապիտալը ֆեոդալական Թիֆլիսը վերածել էր կապիտալիստական

անձանոթ տիեզերք, որտեղ փայլում ու շողշողում էին իսկական գեղարվեստական ստեղծագործության բարձր կերտվածքներ»²³: Վ.Բրյուսովն անձամբ անթուղիայի համար թարգմանել է 170-ից ավելի գործեր՝ հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի առաջին քառորդը: Բացի դրանից՝ նա բանաստեղծությունների մի հրաշալի շարք է գրել՝ նվիրված Հայոց աշխարհին՝ «Հայերին», «Հայաստանին», «Արարատին», «Արարատը Երևանից», «Տիգրան Մեծ» վերնագրերով:

Հայ ժողովրդի մեծ բարեկամի շնորհակալ գործը չէր կարող վրիպել Թումանյանի ուշադրությունից: Նշենք, որ Բրյուսովը 1916թ. հունվարի 8-ին Բաքվում եղբայրներ Մայիլյանների թատրոնի մեծ շենքում «Հայոց բանաստեղծության մասին» զեկուցումով հանդես էր եկել հայ հասարակության առջև: Ապա հայ գրողների ընկերության հրավերով ելույթ էր ունեցել Թիֆլիսում: Թումանյանը ռուս մեծ բանաստեղծի մասին հնչեցնում է ողջունի խոսքը, որը տպագրվում է «Հորիզոն» թերթի 1916թ. հունվարի 13-ի 7-րդ համարում: Նա ընդգծում է Բրյուսովի ձեռնարկած գործը՝ հայ և վրաց գրականություններն ուսումնասիրելու և թարգմանաբար մասսայականացնելու ուղղությամբ՝ նշելով, որ Բրյուսովը և իր գրչընկերները «հանում են, թեև փոքր,

²³ Բրյուսով Վ., Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Եր., 1967, էջ 36:

բայց հին, կուլտուրական ժողովուրդների հոգևոր գանձերը, հիացմունքով ցուցադրում՝ սեր ու հարգանք առաջ բերելով ոչ միայն ռուս հասարակության մեջ, այլ հենց էդ փոքր ժողովուրդների միջև միջնորդ հանդիսանալով, իրար հետ ծանոթացնում ու կապում փոխադարձ սիրո կապերով:

Եվ անկասկած, մեծապես շոյում է մեր ժողովրդի ազգային ինքնասիրությունը և մխիթարում է նրա վշտացած սիրտը...»²⁴:

Հ.Թումանյանն իր ողջույնի խոսքից հետո հանդես է եկել երկու սրտաբուխ խոսքով՝ կրկին ու կրկին բարձրաձայնելով Վ.Բրյուսովի ժողովրդանվեր, բարեկամական գործի մասին:

«Խոսք Վ.Բրյուսովի դասախոսության առթիվ» հոդվածում՝ տպագրված «Հորիզոն»-ի 1916թ. հունվարի 11-ի 11-րդ համարում, Մեծ Լոռեցին, մատնանշելով 1915-1916 թվականների մեր ազգային աղետը, միաժամանակ ընդգծում է, որ այդ ծանր պահին Վ. Բրյուսովը հյուսիսից գալիս է մեզ մոտ ու խոսում մեր բարոյական-հոգեկան ուժի ու մեծության մասին՝ «Հայոց բանաստեղծության մասին»՝ այն անվանելով հայ ազգի ազնվականության վկայական: «Այո՛, - ընդգծում է նա, - հիրավի, հայ հանճարը կարողացել է խոսել մարդկային սրտի ամենանվիրական ու ամենաքնքույշ զգացմունքների

²⁴ Թումանյան Հ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, էջ 240-241:

բարօրության համար անդադրում աշխատանքի ու ստեղծագործական ներշնչման մեջ նա իր սրտում տաք անկյուն գտավ նաև ինձ՝ այդ օրերին փոքր-ինչ շփոթված ռուս բանաստեղծիս համար»⁵³:

Մ.Գորոդեցկին նկատում է, որ իր հանդեպ Հ.Թումանյանի ուշադիր ու գորովալից ուշադրության մեջ ինքը զգում էր նրա սերը դեպի Ռուսաստան, նրա հավատը դեպի ռուս ժողովրդի վսեմ ճակատագիրը, դեպի հայ և ռուս ժողովուրդների անխզելի բարեկամությունը, որ ստուգված էր պատմությամբ և հաստատված այնպիսի բանաստեղծներով, որոնք կարողանում են լսել ժողովրդի ձայնը:

Մ.Գորոդեցկին 1916 թվականի գարնանը մեկնել էր Թիֆլիս «Ռուսակոյե սլովո» թերթի և Քաղաքների միության աշխատակցի վկայագրերով, ըստ որում, նշանակումը՝ համաձայն իր ցանկության:

Գորոդեցկին հաստատում է, որ առաջին համաշխարհային պատերազմը պատերազմ էր հանուն ռուս ժողովրդի կենաց ու պատվի: Դա մի ժամանակ էր, երբ Վալերի Բրյուսովը ստեղծում էր «Պոեզիա Արմենիի» հիանալի գիրքը, որին մասնակցում էին Վյաչեսլավ Իվանովը, Ալեքսանդր Բլոկը և ուրիշ ճանաչված պոետներ: Գորոդեցկին ափսոսում է, որ ինքը հնարավորու-

⁵³ Նույն տեղում, էջ 867:

նյանը ժամանակակիցների հուշերում» ստվարածավալ ժողովածուն, որտեղ զետեղվեցին բազմազգ մտավորականների 95 հուշապատումներ, նրանց թվում և Սերգեյ Գորոդեցկու հուշերը՝ գրված 1958թ. «Լիրիկական դիմանկար» խորագրով: Հուշերի այդ փունջը կարելի է համարել գրական նոր ժանր՝ էսսեի, ակնարկի, դիմանկարի երանգների ներառմամբ:

Ժողովածուում իր հուշերի մուտքում ռուս անվանի բանաստեղծը նվիրյալ ընկերոջ խանդաղատանքով նշում է. «Այն, ինչ գրում եմ Հովհաննես Թումանյանի մասին, դիսերտացիա չէ, հուշապատում չէ, այլ միայն լիրիկական դիմանկար, համարյա թե արձակ ու չափածո պոեմ, որի մեջ ամփոփվում են և՛ անձնական հիշողություններ, և՛ նրա ստեղծագործության մասնակի վերլուծություն, և՛ հատվածներ օրագրերից»⁵²:

Ս.Գորոդեցկին պատմում է, թե ինչպես իր և Թումանյանի հանդիպումներն սկսվեցին ու բարեկամության վերաճեցին հայ ժողովրդի համար ողբերգական մի ժամանակաշրջանում՝ 1916, 1917, 1918 և 1919 թվականներին, ու եղբայրական խոստովանությամբ ընդգծում է. «Ինձ համար էլ դրանք թեթև տարիներ չէին: Հովհաննես Թումանյանի հոգու մեծությունն արտահայտվեց և այն բանում, որ իր ժողովրդի փրկության ու

⁵² Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 867:

հետ և կարողացել է հասնել մինչև Նարեկացին, որ ապաշխարողի կերպարանքով, իր գլուխը բաձրացրել է մինչև երկինք ու գրույց է արել Աստծո իրեն հետ երեսառ երես»²⁵:

Ազգային հպարտության այս ազնիվ զգացումով Թումանյանը հնչեցնում է իր շնորհակալական խոսքն առ Վ. Բրյուսով՝ նրան համարելով այն հազվագյուտ մարդկանցից մեկը, որ կարողացավ կարդալ հայոց կախարդական գիրը ամբողջ աշխարհի առաջ: Դիմելով ռուս մեծ գրողին՝ նա գրում է. «Ռուսաց նշանավոր գրողներից առաջինն եք դուք, որ ձեր հոչակավոր ընկերների հետ միասին մեր և մեր եղբայրակից ժողովուրդների ստեղծագործական կարողությունը ու գեղարվեստական գործերը հիացումով հանում եք լայն հրապարակ և փոխադարձ հարգանքի ու սիրո կապերով ժողովուրդները շաղկապում իրար հետ»²⁶:

Հ.Թումանյանը, բարձր գնահատելով Բրյուսովի սովյալ գործը, միաժամանակ ընգծում է ռուսական մշակույթի հասարակական արժեքն ու խոնարհվում ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև՝ Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Դոստոևսկու, Տուրգենևի, Չեխովի, Տոլստոյի ու նրանց արժանավոր ժառանգորդների գրականության առջև, որի վրա կրթվել են հայ

²⁵ Նույն տեղում, էջ 241:

²⁶ Նույն տեղում, էջ 242:

գրողներից ու մտավորականներից շատ-շատերը: Նա խոսքն ավարտում է կենսափիլիսոփայական հնչողությամբ. «Մենք ինքներս մեր կողմից վաղուց ենք կապված ձեր գրականության հետ, այժմ է՛լ ավելի ուրախ ենք փոխադարձ կապի համար, որ հաստատում էք Դուք, և Աստված տա՛ Դուք միակը չլինեք, որ ռուս բարձր մտավորականության կողմից գալիս էք մեզ մոտ սիրո ու հարգանքի խոսքերով»²⁷:

Մեծ Լոռեցու երրորդ հոդվածը՝ «Խոսք՝ ուղղված Վ.Բրյուսովին», արժանանում է Թիֆլիսի հայ հասարակության ջերմ ուշադրությանը: Թումանյանը եղբայրական շոյված զգացումով նորից հիշեցնում է Բրյուսովի հայանպաստ ձեռնարկումը ու մեջբերում ռուս մեծ պոետի հարցն այն մասին, թե ինչպես են իրենք մինչև այդ օրն անձանոթ մնացել այդպիսի հարուստ գրականությանն ու արվեստին:

Ու մի օր էլ ինչույքի ժամանակ Թումանյանը պատասխանել է նրա հարցին. «Մինչև էսօր Ռուսաստանից մեզ մոտ ուստիկաններ են ուղարկել, թե գնացեք գողեր բռնեցեք ու սրիկաներ: Նրանք էլ եկել են՝ ավազակներ, գողեր ու սրիկաներ են գտել: Դատախազներ են ուղարկել, թե մարդասպաններ ու ոճրագործներ երևան հանեցեք ու դատապարտեցեք: Նրանք էլ եկել են, մարդասպաններ ու ոճրագործներ են գտել: Ժանդարմ-

²⁷ Նույն տեղում, էջ 242:

են պատմական եղբայրական շիրիմների վրա, մի՞թե այժմ հրաժարվում են իրենց ժառանգությունից, Արևելքում իրենց գրաված դիրքից և իրենց ազգային մեծ միսիան կատարելուց»⁵⁰:

Հ.Թումանյանի նամակը լայն արձագանք է գտնում մամուլում: Մի ամբողջ ամիս «Кавказское слово»-ն և «Республика»-ն տպագրում են արձագանքներ: «Кавказское слово»-ի հունվարի 10-ի № 6-ում լույս է տեսնում Սերգեյ Գորոդեցկու պատասխանը՝ «Ответ Ов.Туманяну»: «...Ваше письмо я принимаю как много-значительный акт дружбы и братства между Арменией и Россией, закрепленных кровью войны и революции. Только близкий друг мог ставить вопросы так верно и глубоко, что становится больно от них, и только близкому другу можно ответить так, как отвечаю я: с беспощадной откровенностью.»⁵¹:

ՀԱՄԵՑԵՔ ՆԵՐՍ

1969թ. հայ ժողովուրդը հպարտության ամենաջերմին զգացումով նշեց մեծանուն Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը: Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հրատարակեց «Թումա-

⁵⁰ Նույն տեղում, էջ 293-294:

⁵¹ Տե՛ս Թումանյան Հ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, էջ 463:

յութահատուկ, իսկ ուրիշ ժողովուրդների գրականություններին օտար, ձգտումը՝ «Ճանաչել իր ժողովրդին»⁴⁸:

Հ.Թումանյանը նշում է ռուս մարդու ոգու արիությունը, կրկին ու կրկին ընդգծում, որ ռուս ժողովուրդն առհասարակ մեծ առաքելություն ունի կատարելու ժողովուրդների կյանքում: Սակայն պատմական ընթացքը հանկարծակի փոխվում է, և Կովկասում տեղի է ունենում չափազանց տարօրինակ երևույթ: «Այն ժամանակ, - գրում է Թումանյանը, - երբ Կովկասի բոլոր ժողովուրդները մեկը մյուսի ետևից ողջունում են նոր, ազատ Ռուսաստանը և իրենց ազգային համագումարներում որոշում են մնալ ազատ, մեծ ռուսաստանյան հանրապետության կազմում, հենց այդ ժամանակ ռուսական բանակը, որ հաղթականորեն մտել է թշնամու երկրի խորքը և դարձել դրության տերը, սկսում է նահանջել ոչ միայն ռազմադաշտից, այլև լքել նույնիսկ Կովկասը»⁴⁹:

Հ.Թումանյանը քննադատորեն հարցեր է ուղղում ռուս մեծ բանաստեղծին ու պետական գործչին՝ ընդգծելով. «Մինչև այժմ հավատում էինք, սխալվել էնք... Ի՞նչ էք կարծում՝ ոչ մի կապ չկա՛ այն միլիոնավոր ռուս մարդկանց և այժմյան ռուսների միջև: Եվ մեր օրերի ազատ ռուս մարդիկ, որ դեռևս կանգնած

⁴⁸ Նույն տեղում, էջ 292:

⁴⁹ Նույն տեղում, էջ 293:

ներ են ուղարկել, թե արթուն հսկեցեք, հեղափոխականներ գտեք: Նրանք էլ եկել են՝ հեղափոխականներ են գտել: Եվ այլն, և այլն: Ու լուրը գնացել է Ռուսաստան, թե Կովկասում ավազակներ կան, գողեր ու սրիկաներ կան, մարդասպաններ, խաբեբաներ ու ոճրագործներ կան, հեղափոխականներ կան»²⁸:

Հ.Թումանյանն ավստոսանքով է հիշեցնում, որ Ռուսաստանից բանաստեղծներ չեն ուղարկել, որ գան Կովկասում կամ հայերի մեջ բանաստեղծություն որոնեն: Եվ առաջին անգամ է ռուս բանաստեղծը գալիս՝ հատկապես հայոց բանաստեղծության համար: «Առաջին անգամն են, - ընդգծում է նա, - ռուս նշանավոր բանաստեղծները մեր բանաստեղծությանը մոտենում - և գտնում են լիովի, և այժմ լուրը կերթա Ռուսաստան, թե Կովկասում կամ հայերի մեջ բանաստեղծություն էլ կա, բանաստեղծներ էլ կան...»²⁹:

Հ.Թումանյանը, լինելով վարպետ թարգմանիչ, մատնանշում է թարգմանչական գործի և՛ անհրաժեշտությունը, և՛ դժվարությունը: «Բանաստեղծության թարգմանությունը, - գրում է նա, - էն էլ առանձին համ ու հոտ, շունչ ու ոճ ունեցող բանաստեղծության թարգմանությունը շատ է դժվար ու հազվագյուտ բան: Բանաստեղծության նույնիսկ լավ թարգմանության

²⁸ Նույն տեղում, էջ 243:

²⁹ Նույն տեղում, էջ 243:

համար ասված է, թե մի վարդ է, որ ապակու տակ է դրված: Այսինքն թե՛ ձևը կտեսնես, բայց բուրմունքը չես զգալ: Ինչքան շնորհք է հարկավոր, որ ոչ միայն հարազատ ձևը ցույց տա, այլև ինքնուրույն բուրմունքը հաղորդի: Եվ շնորհքի հետ ի՛նչքան սեր...»³⁰:

Հ.Թումանյանը, մեծարելով Վ.Բրյուսովի գործը, նշանակալից երևույթ է համարում «Հայաստանի պոեզիան» գրքի տպագրությունը և նշում, որ Բրյուսովյան շաբաթը Թիֆլիսում տոնական շաբաթ է:

Հ.Թումանյանը ոչ միայն ողջունեց ռուսերեն հրատարակված «Հայաստանի պոեզիան» ժողովածուն, այլև հասցրեց իր ծանրակշիռ խոսքն ասել միջնադարյան հայ պոեզիայի հանճարեղ ներկայացուցիչներ Նահապետ Քուչակի (16-րդ դար) և Սայաթ-Նովայի (18-րդ դար) երգերի թարգմանությունների մասին: Այսպես՝ «Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի ռուսերեն թարգմանությունների առիթով» հոդվածում նա գոհունակությամբ է նշում, որ այդ թարգմանություններին մասնակցել է ռուս նշանավոր բանաստեղծ Վալերի Բրյուսովը և իր թարգմանություններին կցել մի առաջաբան, որի մեջ մեծ սիրով ու հարգանքով է խոսում հայ ազգի և նրա հին գրականության մասին՝ բերելով մի հատված ռուս ականավոր բանաստեղծի առաջաբանից. «Ժամանակակից պատերազմը նորից հերթի հանեց էն

գրման հույսը կապել էր ռուսական բանակի հետ, որին միացել էին տասնյակ հազարավոր հայ կամավորականներ, այդ թվում՝ Եղիշե Չարենցն ու Թումանյանի Արտավազդ որդին: Պատերազմական արհավիրքներ տեսած հայ ժողովուրդը, որ 19-րդ դարի սկզբից բարեկամական հուսավառ ապրումներով էր համակված ռուսական ազատարար բանակի հանդեպ, զարմացավ, ուղղակի ցավ ապրեց, երբ բոլշևիկյան Ռուսաստանի ղեկավարների պահանջով ռուսական բանակը թողեց Կովկասը ու հեռացավ: Այդ անսպասելի արարքը չէր կարող չցնցել ու չզարմացնել Թումանյանին: Եվ ինչպես հատուկ է նրան, 1918թ. հանդես եկավ Սերգեյ Գորոդեցկուն ուղղված բաց նամակով, որը տպագրվեց «Кавказское слово» թերթի 1918 թվականի հունվարի 8-ի թիվ 1 համարում: Հ.Թումանյանը պատմական իրադարձությունների խորիմացությամբ նամակի սկզբում հիշեցնում է Առաջին համաշխարհային պատերազմում ռուս ժողովրդի դրական գործունեությունն այն առումով, որ նա պատերազմից բացի կատարել է և հեղափոխություն: «Մինչև այժմ, - գրում է նա, - մենք տեսել էինք միայն նրա գլուխը, ի դեմս նրա գրողների և մտավորականության, իսկ ժողովուրդն ինքը - մարմինը - մնում էր մթության մեջ և մեզ անձանոթ: Եվ ես այժմ եմ միայն ըմբռնում ռուս գրականության համար այնքան

³⁰ Նույն տեղում, էջ 244:

ՄԻՆՉԵՎ ԱՅԺՄ ՀԱՎԱՏՈՒՄ ԷԻՆՔ, ՄԽԱԼՎԵ՞Ն ԵՆՔ

Հայտնի են Հ.Թումանյանի բարեկամական կապերն ու համագործակցությունը ռուս ականավոր գործիչների հետ, որոնց մեջ անջնջելի հետք է թողել քանաստեղծ, թարգմանիչ, լրագրող Սերգեյ Միտրոֆանովիչ Գորոդեցկին: Նրանք հաճախակի են հանդիպել ու զրուցել այն օրերին, երբ Գորոդեցկին Թիֆլիսում զինվորական թղթակից էր: Գորոդեցկին գրկաբաց է ընդունել Հոկտեմբերյան հեղափոխությունը և ստեղծագործել մինչև կյանքի վերջը՝ 1967թ. օգոստոսի 6-ը: Լայն արձագանք են գտել ոչ միայն նրա քանաստեղծությունները, այլև արձակն ու թարգմանությունները տարբեր ժողովուրդների գրականությունից:

Գորոդեցկին եղել է հայ մշակույթի մեծ բարեկամներից մեկը, թարգմանություններ է կատարել հայ քնարերգությունից: Նա ևս Վ.Բրյուսովի օրինակով քանաստեղծություններ է նվիրել Հայաստանին ու հայ ժողովրդին: Ստեղծել է Հ.Թումանյանի քնարական դիմանկարը՝ նրան գնահատելով որպես հանճարեղ քանաստեղծ ու աստվածանվեր Մարդ: Գորոդեցկին մոտիկից ճանաչել ու անձնական կապեր է ունեցել նաև Ավ.Իսահակյանի, Ջիվանու, Ե.Չարենցի, Մ.Սարյանի, Հ.Հակոբյանի, Ն.Ջարյանի և հայ մշակույթի ուրիշ գործիչների հետ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովուրդը Արևմտյան Հայաստանի ազատա-

ժողովրդի վիճակի հարցը, որ գրեթե երկու հազար տարի «Եվրոպայի առաջապահն է եղել Ասիայում»: Իհարկե, ոչ ոք չի երկբայում, որ հայերը արժանի են կարեկցության էն անպատմելի տանջանքների համար, որ արդեն մի քանի դար է քաշում են թուրքական լծի տակ: Բայց հայ ազգը ուշադրության առնվելու բարձրագույն իրավունքն ունի, և դա բարձր-կուլտուրական ժողովրդի իրավունքն է՝ խոսքի ամենալավ իմաստով:

Հայոց գրականությունը, որ իր գոյությունը հազար հինգ հարյուր տարու է հասցնում՝ սրա ամենալավ ապացույցն է: Հայոց քանաստեղծությունը, Ֆետի խոսքով ասենք, հայ ժողովրդի «ազնվականության վկայականն է»³¹:

Հ.Թումանյանը միաժամանակ մատնանշում է այն հաճելի գնահատականը, որ տվել է Վ.Բրյուսովը Նահապետ Քուչակի ու Սայաթ-Նովայի երգերին, առանձնապես այն կարծիքը, ըստ Բրյուսովի, որ միայն այս երկու քանաստեղծները բավական են, որ նրանց ծնող հայ ժողովուրդը միանգամ ընդմիջտ մտնի էն կուլտուրական ժողովուրդների շարքը, որոնք միասնաբար մասնակից են մարդկության ստեղծագործությանը, և հարակցում է, թե ինչ առանձին խնամքով է վերաբերվել նրանց երգերի թարգմանությանը:

³¹ Նույն տեղում, էջ 232:

Իր հողվածում Հ.Թումանյանը գործի խորիմացությամբ բերում է նաև առանձին դիտողություններ՝ սխալ թարգմանված տողերի կապակցությամբ, միաժամանակ մատնանշում, որ թեպետ Սայաթ-Նովայի երգերի թարգմանությունը սկսել է Պոլոնսկին 1850-ական թվականներին, նրանից հետո էլ են մի քանի անգամ ռուսերեն թարգմանել, «բայց առաջին անգամն է, որ պ.Բրյուսովը թարգմանում է վարպետի ձեռքով՝ աշխատելով հաղթել գրեթե անհաղթելի արգելքների և՛ ինչպես Սայաթ-Նովայի, էնպես էլ Նահապետ Քուչակի երգերը տալ ռուսերեն, խորապես ճաշակելով նրանց մեծությունը և ինքնուրույն շունչն ու երանգը և նրանց գործերը անվանելով հայ ժողովրդի ազնվականության վկայական»³²:

Օգտվելով առիթից՝ Հ.Թումանյանը սույն հողվածում կրկին ու կրկին մատնանշում է գեղարվեստական խոսքի նշանակությունը համամարդկային հորիզոններում: «Այո՛, - շեշտում է Մեծ Լոռեցին, - ճշմարիտ է՝ գեղեցիկ գրականությունը, իբրև հոգու պարզ ու կատարյալ արտահայտություն, ժողովուրդների անխարդախ վկայականն է, և ինչքան բարձր է գրականությունը, էնքան բարձր վկայական է մի

³² Նույն տեղում, էջ 238:

մասին. «Ավելի խորն է ցնցել Մաքսիմ Գորկու ճառը, - նշում է նա, - որ մի կրակոտ ջատագովություն է գիտությանը: Նա եղած ազատությունը անվանում է արտաքին ազատություն. ասում է՝ հոգեպես դեռ ստրուկ ենք: Հոգեկան ստրկությունից մեզ միայն գիտությունն է ազատելու: Եվ ռուսական երազկոտությունը, տգիտությունն ու ծուլությունը ձաղկելուց հետո, որոտընդոստ ծափերի մեջ իր խոսքը վերջացնելով՝ առաջարկել է հիմնել գիտության ինստիտուտ 1917թ. փետրվարի 27-ի հիշատակին: Տեղն ու տեղը տվել է իր հասցեն, որ գործին օգնել ուզողները իրենց օգնությունը իրեն հասցնեն»⁴⁶:

Մեծ Լոռեցին Գորկու այս հայրենասիրական գործը համարում է օրինակելի և խորհուրդ է տալիս օրինակ վերցնել ռուս առաջադեմ մտավորականներից ու խորհել ունենալ Հայոց համալսարան, Հայոց ակադեմիա, որպեսզի հաջողվի ծավալել գիտությունը, գրականությունն ու գեղարվեստը մեզանում: Ու ազգային հպարտությամբ հանձարեղ գրողը հաստատում է. «Մենք ամեն կողմից ընդունակ ենք էս բարձր նպատակներին հասնելու, լավագույն ազգերի բարձրությանը հասնելու, իսկ էս ամենին հասնելու համար արդեն ճանապարհը բաց է մեր առջև, ուղիղ ու պայծառ»⁴⁷:

⁴⁶ Նույն տեղում, էջ 290:

⁴⁷ Նույն տեղում, էջ 291:

այդ օրերին, որ եվրոպական երկրները, Ամերիկյան տեղի պիտի տային Թյուրքիային՝ հօդս ցնդեցնելով Սևրի հայամետ պայմանագիրը:

Հ.Թումանյանի սերը ռուս գրականության հանդեպ առնչված էր ռուս ժողովրդի ու նրա լուսավոր մտավորականների մարդասիրական գաղափարների հետ: Այստեղից էլ՝ նրա խորհուրդները հայ սերունդներին՝ մշտապես լինել Ռուսաստանի հետ, ռուս ժողովրդի հետ, համերաշխ ու գործունյա:

Ռուս ժողովրդի պատմական այս դերի ըմբռնումն է Թումանյանին ուղղորդել դեպի ռուսական մշակույթի այն գործիչները, ովքեր իր ժամանակակիցներն էին: Դրա խոսուն վկայություններից է «Ուղիղ ճանապարհ» հոդվածը՝ որպես արձագանք 1917 թվականի ապրիլի 9-16-ը Պետրոգրադում և մայիսի 11-ին Մոսկվայում տեղի ունեցած ռուս առաջադեմ գիտնականների ու արվեստագետների համաժողովի: Այդտեղ իրենց ճառերում ռուս մտավորականները միաձայն Ռուսաստանի հիմնական դժբախտությունը տեսնում են հետամնացության մեջ բռնապետական կառավարության պատճառով:

Ռուս առաջադեմ մտավորականները հաստատում են, որ առանց գիտության ու կուլտուրայի՝ ժողովուրդը, այսպես ներքև գլորվելով, դեռ երկար ժամանակ վայրենի կմնա:

Հ.Թումանյանը մի առանձին ոգևորությամբ է խոսում այդ համաժողովում Մաքսիմ Գորկու ելույթի

ժողովրդի կուլտուրականության, բայց միաժամանակ նաև բարձր հոգեկան կապ է ժողովուրդների մեջ»³³:

Հանդես գալով նաև հայոց բանաստեղծության մասին Վ.Բյուսովի դասախոսության առիթով՝ Հ.Թումանյանը դիմում է ռուս մեծ պոետին. «Դուք եղաք էն հազվագյուտ մարդկանցից մինը, որ կարողացաք կարդալ էս կախարդական գիրը ամբողջ աշխարհքի առջև: Մեզ էս կողմից քիչ են ճանաչում լուսավոր աշխարհքում և մանավանդ Ռուսաստանում: Ռուսաց նշանավոր գրողներից առաաջինն եք Դուք, որ Ձեր հռչակավոր ընկերների հետ միասին մեր և մեր եղբայրակից ժողովուրդների ստեղծագործական կարողությունը ու գեղարվեստական գործերը հիացումով հանում եք լայն հրապարակ և փոխադարձ հարգանքի ու սիրո կապերով ժողովուրդները շաղկապում իրար հետ:

Էս բարձր ու գեղեցիկ գործի համար Հայոց Գրողների Ընկերության անունից հայտնում են Ձեզ մեր լիասիրտ շնորհակալությունը: Ողջունում են Ձեզ որպես ռուսական գրականության խոշոր ներկայացուցչի և սիրով ու պատկառանքով խոնարհվում են ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև - Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Դոստոևսկու, Տուրգենևի, Չեխովի, Տոլստոյի և իրենց արժանավոր ժառանգների գրակա-

³³ Նույն տեղում, էջ 238:

նության առջև, որի վրա կրթվել են մեր գրողներից ու մտավորականներից շատ շատերը»³⁴:

Հ.Թումանյանը մեծարում է նաև Ռուսաստանի ականավոր զավակներին, որ կյանքում լավագույնն են փնտրում, ընտրում ու սիրում: Այդ գործում ջանքեր չեն խնայել Ալ.Բլոկը, Բայլմոնտը, Վ.Իվանովը և այլք: Արդյունքը հիանալի է, որի շնորհիվ Թումանյանը նշում է. «Վերջապես եկավ վաղուց սպասված գիրքը՝ «Հայաստանի պոեզիան»: Եվ ռուսերենից ու ռուսախոս հայերից նրանք, որ միայն Հայաստանի թշվառությունն էին լսել, կոտորածներն ու սարսափները գիտեին, այժմ կտեսնեն և նրա բանաստեղծությունը ու կսիրեն: Չեն կարող չսիրել, որովհետև ինքը ամբողջ սեր է, իսկ մեր անգուգական Սայաթ-Նովայի խոսքով ասենք. «Մերը սեր կու բերե...» և «Աշուղի լեզուն բլբուլ է, օրհնանք ունի, նալաթ չըկա...»³⁵:

Հ.Թումանյանը գրականությունը համարել է ժողովուրդների միջև հոգեկան ու բարոյական կապեր հաստատող մեծ ուժ: Նա այդ մասին է խոսում նաև «Հայոց պատմությունը» հոդվածում: Հայ և ռուս ժողովուրդների միջև նման գործի սկզբնավորումը կապում է Վ.Բրյուսովի հետ և բերում է նրա սրտաբուխ խոսքն այն մասին, որ «ռուսաց գրողներից շատերն այժմ

³⁴ Նույն տեղում, էջ 242:

³⁵ Նույն տեղում, էջ 245:

«Չորս հարյուր տարի, - գրում է Թումանյանը, - Արևելյան Եվրոպան ահով ու սարսափով դիմագրավեց նրա դժոխային արշավին, մինչև որ 17-րդ դարում, Վիեննայի պատերի տակ, վերջնականապես կտրեց նրա առաջ անցնելու հույսը:

Այնուհետև կռիվն իրեն վրա առավ նոր գորացող Ռուսաստանը, որ երեք հարյուր տարի է՝ անհաշտ ու անդադար պատերազմ է վարում էդ դաժան ու խավար ուժի դեմ»⁴⁴:

Թումանյանը, շարունակելով խոսքը, բարձրաձայնում է՝ ի լուր աշխարհի. «Մեծ է Ռուսաստանի էս ծառայությունը քաղաքակիրթ աշխարհքի առաջ, և երբեք նրա կառավարության հոռի կողմերը չպետք է արգելեն տեսնելու էս մեծ գործը, որի հաջող ավարտումը համաշխարհային տոն է քաղաքակրթության համար: Տոն է մանավանդ էն ազգերի համար, որոնք դարերով կրել են թուրքի անտանելի լուծը և դարերով լալիս են իրենց անվերջ կորուստները նրա ձեռքից»⁴⁵:

Մեծ Լոռեցին հավատով ընդգծում է այն երազանքը, որ մեծ Հայաստանը վերջնականապես մաքրվել է թուրքական տիրապետությունից: Դա 1916 թվականն էր: Մեր ազգային հանճարն ինչպես կռահեր

⁴⁴ Նույն տեղում, էջ 276:

⁴⁵ Նույն տեղում, էջ 276:

Թուրքիան հանդիսանում է արևելքի ներկայացուցչությունը արևմուտքի հանդեպ մինչև էսօր:

Եվ Բաբելոնից, Ասորեստանից, Պարսկաստանից ու արաբական իշխանությունից հետո Արևելքը երբեք չէր ունեցել էսքան վայրենի, էսքան անկուլտուր ու անարժան մի ներկայացուցչություն: Մինչև թուրքական գերիշխանությունը՝ Արևելքը, որ կրոններ էր տվել աշխարհքին, փիլիսոփայական սիստեմներ, շատ մեծ բանաստեղծներ ու գիտություններ՝ մեծ էլ հարզ ու հմայք ուներ և միշտ կենդանի ապրում էր ավանդական խոսքը թե՛ Արևելքից է լույսը: Թուրքական գերիշխանությունից հետո Արևելքը և խավարն ու բարբարոսությունը դարձան հոմանիշ հասկացություններ»⁴³: Եվ ոչ միայն այդ: Մեծ Լոռեցին նշում է, որ Թուրքիան ոչ միայն ինքը չստեղծագործեց ու ոչ մի հանճարեղ բան չտվեց աշխարհին, այլև դրսից չընդունեց ոչինչ և չմշակեց: Միշտ մնաց սուրը ձեռքին ավերող: Ավելի սարսափելին ու անհանդուրժելին այն է, որ Թուրքիան իր արյունոտ սրով մորթեց Արևելքի կուլտուրական ժողովուրդներին, խորտակեց նրանց հին ու փառավոր կուլտուրաները և, վերջին մահացու հարվածը տալով բյուզանդական պալեոլոգներին, այդ սպանիչ սուրը մեկնեց Եվրոպայի սիրտը:

⁴³ Թումանյան Հ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, էջ 275:

գրադված են հայոց գրականության ուսումնասիրության ու թարգմանության գործով: Օրեցօր ավելի ու ավելի են ճանաչում հայոց բանաստեղծությունն ու հայ ժողովրդին, և հաճելին այն է, որ այդ շնորհակալ գործի գլուխն է կանգնած հենց ինքը Բրյուսովը, որի դասախոսությունը՝ «Հայ բանաստեղծության մասին» ընդհանուր առումով թերևս կարելի լինի ռուս գրողների էդ հրճվալից վերաբերմունքի արտահայտությունը համարել»³⁶:

Նա հրճվանքով է ընդգծում այն հանգամանքը, որ Վ.Բրյուսովը հայոց բանաստեղծությունից անցնում է պատմությանը:

Հոդվածում վերհիշելով հայ և վրաց ժողովուրդների կրած տառապանքը, 1795թ. պարսկական բռնակալ Աղա Մահմեդ Կաջար խանի գլխավորությամբ Թիֆլիսի գրավումը և ժողովուրդների մեծ երգիչ Սայաթ-Նովային սրախողխող անելը՝ Հ.Թումանյանը կոչ է անում մտավորականներին լսել Վ.Բրյուսովին, որը խորհմացությամբ է խոսում հայոց պատմության մասին, հայի դարավոր տառապանքի ու մաքառումի մասին, հայի ապագայի մասին:

Հովհաննես Թումանյանի և Վալերի Բրյուսովի եղբայրական սերն ու հարգանքը եղել է փոխադարձ:

³⁶ Տե՛ս Թումանյան Հ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, էջ 245:

Ռուս անվանի քանաստեղծ-գիտնականը, հանձին Թումանյանի, տեսել ու գնահատել է 20-րդ դարասկզբի հայ պոեզիայի գերաստղին: Իր ելույթներում ու նամակներում Վ.Բրյուսովն անպայմանորեն ասել է դրվատանքի խոսք՝ ըստ էության: «Հայաստանի պոեզիան և նրա միասնությունը դարերի ընթացքում» գեկուցման մեջ, անդրադառնալով հայ պոեզիայի անցած բեղմնավոր ճանապարհին, բարձր է գնահատում Հովհաննես Հովհաննիսյանի քնարերգությունը, ապա նշում Թումանյանի պոեզիայի առանձնահատկությունները՝ որպես նոր խոսք հայ գրականության առաջընթացում: «Հովհաննես Թումանյանը, - գրում է Բրյուսովը, - Հովհաննիսյանի համեմատությամբ ավելի կրթոտ, ավելի անմիջական քանաստեղծի տիպ է: Լեռնային Լոռու բնիկ, շատ կողմերից ինքնուս, հսկայական, բայց ոչ սիստեմատիկ ընթերցանության տեր, հայ հնաշխարհի սիրահարված և ժողովրդական կենցաղակերպին հոգով մոտիկ Թումանյանը կարծես մարմնացումն է հարավցու տիպի, որի մեջ հրաշագեղորեն միահյուսվում են երկու նախասկիզբ՝ քեֆն ու հանճարը: Այսօր համարյա թե նոր պոեզիայի «Նահապետ», որովհետև քանաստեղծների նոր սերունդն արդեն կարողացել է աճել ու նոր իդեալներ բերել իր հետ: Թումանյանը Թիֆլիսի ամբողջ հայ գրական կյանքի կենտրոնն է...

ՄՈՒՐՈՄՑԻ ԻԼՅԱՆ՝ ՁԵՁ ՕՐԻՆԱԿ

Ուշագրավ երևույթ է Մեծ Լոռեցու «Հսկայի ազատագրումը» վերլուծական հոդվածը՝ նվիրված ռուս ժողովրդի էպոսին: Լինելով հմուտ էպոսագետներից մեկը՝ Թումանյանն արդեն քննարկել ու արժևորել էր և՛ «Սասունցի Դավիթ»-ը, և՛ սերբական էպոսը: Ուստի նրա խոսքը ռուսական դյուցազներգության մասին հնչեց նոր երանգներով և իմաստությամբ: Նա ռուսական էպոսի գլխավոր հերոսի՝ Մուրոմցի Իլյայի ազատասիրության մեջ տեսնում է ռուս ժողովրդի հոգևոր-բարոյական բարեմասնությունները ու խորհուրդ է տալիս Իլյայի պես սիրել հայրենիքը ու մարտնչել նրա ազատության համար:

Ծանոթանալով Հ.Թումանյանի ելույթներին ու գեկուցումներին, հոդվածներին ու գրառումներին՝ նկատում ես, որ նա գրականության, ընդհանրապես մշակույթի հարցերը շոշափելիս անպայմանորեն անդրադառնում է ռուսական արվեստին և ընդհանուր տեսական հիմնախնդիրների հոլովմամբ կատարում իր ընդհանրացումները: Այսպես՝ «Արևելքի նոր դարագլուխը» հոդվածում բնութագրելով թուրքական վայրենությունը՝ այն համարում է խավարի ու բարբարոսության հոմանիշ: «Իսլամական արևելքը արաբական գերիշխանությունից հետո ընկնում է թուրքի գերիշխանության տակ, - գրում է Հ.Թումանյանը, - և 14-րդ դարից սկսած,

կողմից 1895թ.: Երկու թարգմանությունների մասին մամուլում հանդես է եկել Հարություն Թումանյանը՝ նախապատվությունը տալով Հակոբ Տեր-Պետրոսյանի թարգմանությանը: Այս կարծիքը եղել է կողմնակալ, անընդունելի: Հայ քննադատական առողջ միտքն ապացուցել է Հ.Թումանյանի թարգմանության հավերժաժույթ ուժն ու արվեստը: Տարիներ անց՝ 1911թ., Ա.Տերտերյանը գրել է. «Շատ քիչ բանաստեղծների է հաջողվում թարգմանել օտար գրականությունից այնպիսի երկեր, որոնք հարազատ լինեին նրանց ստեղծագործությանը, այսինքն՝ թարգմանական տողերը նրանց գրչի տակից դուրս ելնեին իբրև ինքնուրույն, ինքնաբուխ և սեփական ստեղծագործություն: Հովհ. Թումանյանը պատկանում է բախտավոր բացառությունների թվին... Այն բոլոր թարգմանությունները, որ նա արել է, մի զարմանալի զուգադիպությամբ թարգման են հանդիսանում նրա զգացումներին ու հույզերին: Այդպես է նաև Լերմոնտովի «Մծիրի»-ն, որի ամբողջ հյուսվածքը շնչված է հայրենի եզերքի կարոտով, որ այնքան ներդաշնակ և համահարազատ է մեր բանաստեղծի հիմնական ապրումների հոգուն»⁴²:

Այո՛, Հովհաննես Թումանյանը խորապես տիրապետել է թարգմանության արվեստին ու դարերին հանձնել «Մծիրի»-ի անզուգական թարգմանությունը:

⁴² Տերտերյան Ա., Երկեր, Եր., 1980, էջ 30-31:

...Աճող սերունդը սովորում է խոսքն ու պոեզիան սիրել Թումանյանի էջերով և նրա բանաստեղծություններից էլ ներծծում մայրենի լեզվի իր սերը»³⁷:

Վ.Բրյուսովը Թումանյանի պոեզիան համեմատում է զարնան ջրերի հետ և նշում, որ նրա համակ ստեղծագործությունը կրում է հանպատրաստից ստեղծող տաղանդի գծեր: Բրյուսովը մի առանձին հմայքով է խոսում Մեծ Լոռեցու պոեմների մասին, որոնցում արտահայտված են ժողովրդական կյանքի բազմակողմանի ճանաչողությունն ու ժողովրդական ոգու ընդերքին աշխուժորեն թափանցելը: «Այլ ժողովրդի ընթերցողը, - նշում է Բրյուսովը, - ծանոթանալով Թումանյանի պոեմներին (օրինակ՝ «Անուշ»-ին)՝ ժամանակակից Հայաստանն ու նրա կյանքը ճանաչելու ավելի բան կստանա, քան կարող են տալ սոցիալական հետազոտությունների հարուստ հատորները»³⁸:

Հղկելով բարձր գնահատականների ուլունքաշարը՝ Վ.Բրյուսովն ընդհանրացնում է. «Ամբողջովին վերցրած՝ Թումանյանի պոեզիան Հայաստանն ինքն է՝ հնադարյան ու նոր հարություն առած ու բանաստեղծությամբ արտահայտված մեծ վարպետի ձեռքով»³⁹:

³⁷ Բրյուսով Վ., Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, էջ 121:

³⁸ Նույն տեղում, էջ 121:

³⁹ Նույն տեղում, էջ 122:

Հայտնի են նաև Վալերի Բրյուսովի նամակները՝ 1916-1917 թթ. հղված Մեծ Լոռեցուն, որոնք փայլում են ծիածանի գարնանային երանգներով՝ որպես ոչ միայն արվեստագետի խոսք, այլև եղբոր երախտագիտության սրբազնագույն խոստովանություն:

ԳՐԱԿԱՆ ԳԵՐԱՍՏՂԵՐԻ ԼՈՒՅՍԸ

Հ.Թումանյանը գրականությունը գնահատում է՝ որպես ժողովուրդների պատմության հետ սերտորեն առնչված հզոր ուժ: Դրանով է պայմանավորված նրա իմաստայից ընդհանրացումը «Համաշխարհային գրական տոնը» հոդվածում՝ նվիրված անգլիական անմահ գրող Շեքսպիրի և իսպանացի Սերվանտեսի հիշատակին: Ցավով նշելով առաջին համաշխարհային պատերազմի պատճառած աղետներն ու կորուստները՝ նա նշում է. «Էս տոնը վրա է հասնում սգավոր մարդկությանը՝ որպես մի համաշխարհային միություն, թե՛ ազգերը միայն ավերիչ թնդանոթներ չեն դրկում իրար, այլև ստեղծագործող հանճարներ, թե նրանք միայն իրար չեն ծվատում ու իրարից խլում, այլև փոխադարձաբար իրար տալիս են է՛ն ամենաբարձրը, ինչ որ կարող է մարդը երագել, թե նրանք ունին էն տեսակ կապեր, որոնք միշտ մնում են սրբազան, ամուր ու անսասան, նույնիսկ և էն ժամանակները, երբ

պատառոտված ու ոտնակոխ են եղած արքայական կնիքներով կնքված ամեն դաշնագիր»⁴⁰:

Հայոց մեծերի մասին լինի, թե օտարազգի, Հ.Թումանյանն անպայմանորեն մատնանշում է ռուս գրականության հանճարեղ ներկայացուցիչներին: Այսպես՝ անդրադառնալով Մ.Նալբանդյանի գրական ժառանգությանն ու հեղափոխական գործունեությանը, առանձնապես «Հյուսիսափայլ» ամսագրում նրա տեղին ու դերին՝ Թումանյանը «Հորիզոն» թերթի 1916թ. մարտի 31-ի թիվ 72-ում հանդես է գալիս «Մ.Նալբանդյանի հիշատակին» հոդվածով, որտեղ նշում է. «Շատ սիրեցի եղ քաց կապույտ, շողարձակ տետրակները և պատանեկան ոգևորությամբ կարդում էի: Առանձնապես դյուր էին եկել Կոմս Էմանուելի հիշատակարանն ու մյուս գրվածքները, Մ.Նազարյանի խորհրդածություններն ու թարգմանությունները և Սադաթյանի թարգմանած՝ Լերմոնտովի «Դևը»⁴¹:

Հ.Թումանյանի սերը Լերմոնտովի պոեզիայի հանդեպ միշտ եղել է բորբոք ու ջերմացնող: Պատահական չէ 1896թ. ռուս պոետի «Մծիրի» պոեմի բարձրարվեստ թարգմանությունը: Հետաքրքիրն այն է, որ Լերմոնտովի ծննդյան 80-ամյակի առթիվ սույն պոեմը թարգմանվել է նաև Հակոբ Տեր-Գևորգյանի

⁴⁰ Թումանյան Հ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, էջ 247:

⁴¹ Նույն տեղում, էջ 250: